



ԵՐԿԱՄՍՅԱՅ ՀԱՆԳԻՏ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿԵԱԼ

Ի ՍՈՓԻԱՅԷ ՄՍԵՐԵԱՆՑ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

„Ա՛ւ է անագան քան ո՛չ երբէք“ (Ա.աշ):

ՏԵՏԻ Ե.—(ՍԵՊՏԵՄԲԵՐ-ՀՈԿՏԵՄԲԵՐ)—1881 ՄԻ

ԾԱՆՈՒՅՈՒՄՆ

- »ՓԱՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ“ հանդիսի նիւթն է՝ Պատմական, Բանասիրական, Քաղաքական և Ազգային Գիտելիք:
- »ՓԱՐՈՍ“ լինելով պատկերազարդ հանդէս՝ խնդրում է պատուելի ազգայնոց առաքել նորան, տպագրութեան համար, Ազգային հեղինակաց և երևելի անձանց, Հայաստանի հնութեանց և նշանաւոր տեղեաց պատկերներն, նոցա համառօտ նկարագրութիւններով:
- »ՓԱՐՈՍԻ“ խմբագրութիւնն ուրախութեամբ կընդունէ տպագրութեան համար ազգային մատենադրութեան և ազգային կենաց վերաբերեալ յօդուածներ, ազգային վէպեր, ոտանաւորներ, և այլն:
- »ՓԱՐՈՍ“ հրատարակի ՚ի Մոսկուա վէց անգամ ՚ի տարին, այն է՝ երկու ամիսն մէկ անգամ:
- »ՓԱՐՈՍԻ“ տարեկան գինն հանդերձ առաքմամբ է 5 ռուբլի:
- »ՓԱՐՈՍԻ“ ներկայ ամի տետրերն առանձին չեն վաճառվում:
- »ՓԱՐՈՍԻ“ ԽՄԲԱԳՐԱՏԱՆ հասցէն այս է. Москва, Мещиникова баула, домъ Милованова. (Մոսկուա. Մէնչնիքովա բաշնեայ, տուն Միլովանովի):

Ի ՄՈՍԿՈՒԱ
IMPRIMERIE A. A. GATZOUK.
à Moscou, Boulevard de Nikitsky, maison Gatzouk.
1881.

Վ. Պօլոյ ՍՐԻԱՋԸՆ ՆԵՐՍԷՍ ՊԵՏՐԵԱՐԻՒՆՆԵՐԻ նոր նկարուած վիճառի պատկերն ստանալ ցանկացողներն վճարում են իւրաքանչիւր օրինակի համար 1 ռ.



ԱՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ պատկերազարդ հանդէսն 'ի Տէրութենէ ստացեալ թոյլտուութեան համաձայն, հրատարակվում է 'ի տարին վեց անգամ, այն է՝ Երկուամիսն մէկ անգամ (Յունուարին, Մարտին, Մայիսին, Յուլիսին, Սեպտեմբերին և Նոյեմբերին): Նորա իւրաքանչիւր տետրն բովանդակում է իւր մէջ 2½ — 3 քառաձաղ թերթ 10—12 պատկերներով:

Տարեկան գինն, չը նայելով թերթերի և պատկերների աւելման, մնում է նոյն, այն է՝ 5 ռուբլէ հանդերձ առաքմամբ, կանխիկ վճարելի:

Խոստացան միշտ աշխատակցելու մեզ՝ պ. Զարմայր Մ. Մսերեանց, Տ. Ասողիկ*, Ս. և Օ. Մոսկուայում.— պ. Արմենակ Սիւնի*, Մոծակ*՝ Տփլիսում.— պ. Վ. Աղամջանեանց և Զեւան*՝ Աղեքսանդրապօլում.— պ. Տ. Փ., պ. Տիգրան-Աշոտ*, պ. Միքէլ Մսերեանց, և պ. Լուսարար-Փարոսի*՝ Վ. Պօլսում.— պ. Գ. Մսերեանց՝ Զմիւռնիայում.— պ. Յ. Զաքրեան՝ Զէյթունում, և այլք՝ որոց անուններն գեո. իրաւունք չունենք հրատարակելու: Ունիմք նաև սեպհական թղթակիցք՝ Լոնդոնում, Փարիզում, Վ. Պօլսում, Կարին, Վան, Հսպահան, Բագու, Երևան և այլ տեղեր, որք միշտ պիտի հաղորդեն մեզ ազգային տեղեկութիւններ և ծոխացնեն մեր հանդէսը ազգային պատկերներով:

Ծանօթ. Ասողով նշանակուած անուններն կեղծանուն են (Փսէօպօնի):

ՏԱՐԵՑՈՅՑ ՓԱՐՈՍԻ

1881 թուականին քրիստոսի և ՌՅԼ—ՌՅԼԱ (1830—1831) ազգիս Հայոց:

ՏԱՐԵԹԻՒՏԷ:

Ի սկզբանէ աշխարհի	7.389
Ի սկզբնաւորութենէ Հայոց թուականիս	ՌՅԼ.
Ըստ Հայկայ շրջանին	4.372
Գ. Շրջանին Հայկայ	1.452
Փոքր թուոյն Հայոց ըստ Ազարիայի	ՄԿԵ.

ՏԱՐԵՄՈՒՏԷ:

Բուն թոյն Հայոց 4.373	Օգոստ.	11
Հայոց թուականին ՌՅԼԱ	"	13
Փոքր թուոյն Ազարիայի ՄԿԶ	Մարտի	21
Գ. Շրջանին Հայկայ 1.453	"	9
Թուականին քրիստոսի 1882	Յունուարի	1

ՀԱՄԱՌՕՏ ԱԶԳԱՅԻՆ ՏՕՆԱՅՈՅՑ 1881 ԱՄԻ:

Օր ԾՆՆԴԵԱՆ	'ի Յուն.	6	Համբարձումն	'ի Մայիսի	21	Բարեկ. վարագ. խաչ .	'ի Սեպտեմ.	20
Միջոց ուտիք, աւուրք		27	Հոգեգալուստ	"	31	Միջոց ուտիք, շաբաթք	Եօթն.	
Բարեկենդան Առաջ	'ի Փետրվ.	1	Բարեկ. Ս. Լուսարարի .	'ի Յունիսի	21	Գիւտ խաչ	'ի Հոկտ.	25
Օր ՏԵԱՌՆԸՆԴԻԱՌԱՅԻ	"	14	ՎԱՐԳԱՎԱՌ	'ի Յուլիսի	19	Բարեկ. Յիսնակաց	'ի Նոյեմբ.	15
Բուն բարեկենդան	"	22	Միջոց շաբաթք պահօրք	Չորք.		Բարեկ. Ս. Յակ. պհ	'ի Գեկտ.	6
Օր Աւետման	'ի Ապրիլի	7	ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ	ՍՕգոստ.	16	Ս. Յակոբ	"	12
ԶԱՏԻԿ	"	12	Միջ. շաբ. պահօրք	Չորք.		Միջոց ուտիք, աւուրք		17
Երևման խաչ	'ի Մայիսի	10	ԽԱԶՎԵՐԱՅ	'ի Սեպտեմ.	13	Օր բարեկ. Ծննդ	'ի Գեկտ.	29

ԱՌՈՒՐԷ ՄԱՀՈՒԱՆ ԵՐԵԻԵԼԻ ՀԱՅԿԱԶԱՆՑ:

* Փետրվար: 6. մահ Յովհաննու Յովակիմեան Լազարեանց (1857):—13. մահ Ներսէս Ե. Կաթողիկոսի ամենայն Հայոց (1857):—Մարտ. 19. մահ Յովսէփայ Գ. Կաթողիկոսի (1801):—Ապրիլ. 5. մահ Միքայէլի Միսնասարեանց (1880):—8. մահ Գարբիէլ արք եպիսկոպոսի Այվաղեանց (1880):—16. մահ Ճանիկայ Արամեան (1879):—26. մահ Ստեփաննոսի Նազարեանց (1879):—Մայիս. 24. մահ Յարութիւն վարդ. Ալամզարեան (1834):—28. մահ Ղուկասու Գ. Պարզազարեան

(1878):—Օգոստոս. 2. մահ Մսերայ Մ. Մսերեանց (1873):—14. մահ Յովհաննու Գաւթեան Լազարեանց (1879):—19. մահ Միքայէլ արքեպիսկոպոսի Սալանթեան (1851):—22. մահ Մատթէոս Կաթողիկոսի (1865):—29. մահ Կարապետ վարդ. Շահնազարեան (1865):—Հոկտեմբեր. 14. մահ Ղազարայ Յովակիմեան Լազարեանց (1871):—Գեկտեմբեր. 9. մահ Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց (1871):

ՀԱՅԵՐԷՆ ԼՐԱԳԻՐԷ ԵՒ ԱՄՍԱԳԻՐԷ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ 1881 ԱՄԻ:

1. Արարատ՝ ամսագիր կրօնական, պատմական, բանասիրական, բարոյական և ազգային, հրատարակի իւրաքանչիւր ամսոյ վերջում: Տարեկան գինն է՝ 4 ռ.
2. Մշակ՝ հանապազօրեայ լրագիր քաղաքական և բանասիրական: Տարեկան գինն է՝ 10 ռ.
3. Մեղր—Հայաստանի՝ հանապազօրեայ լրագիր քաղաքական և բանասիրական: Տարեկան գինն է՝ 10 ռ.
4. Պատի՝ լրագիր գրականական, պատմական և մանկավարժական: Տարեկան գինն է՝ 4 ռ.

ՓԱՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ



ԵՐՐՈՐԴ

ՏԱՐԻ

ԵՐԿԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԻՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՏԵՏԻ Ե

ՍԵՊՏԵՄԲԵՐ—ՀՈԿՏԵՄԲԵՐ

1881 ԸՄԻ

ԵՍԱՅԻ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ՊԱՏՐԻԱՐԿ ՍՐԲՈՅ ԱԹՈՒՈՅՆ ԵՐՈՒՍԱԿԷՄԱՅ:



ՍԱՅԻ
Պա-
տրի-
սարք
Երու-
սաղէ-
մայ ճնեալ է 1821
թուին 'ի Թաւրաս
գիւղն Կեսարիոյ: Իւր
ճնողքն պարզ ար-
հեստաւորներ էին և
ինքն 13 տարեկան
հասակին մէջ Կ. Պո-
լիս գալով վեց տարի
հիւսնութեան ար-
հեստին պնդապեցաւ.
յետոյ 1844 թուին
գնալով յԵրուսա-
ղէմ՝ չորս տարի
ուսմամբ պարագեղն
ղկնի, 1848 թուին,
տարկաւագ և 1851 ին
վարդապետ ձեռնադ-
րուեցաւ, որու արուեստը միանգամայն դպրոցաց և
տպարանի տեսչութեան պաշտօնն: Սոյն պաշտօնից
հետ յանձն առաւ հաստատել մի թանգարան վեր-



ԵՍԱՅԻ ՊԱՏՐԻԱՐԿ ԵՐՈՒՍԱԿԷՄԱՅ
ПРЕОСВЯЩЕННЫЙ ИСАИЯ, ИЕРУСАЛИМ. АРМЯНСКИЙ ПАТРИАРХЪ
(Պատկերս նկարեցաւ և փորագրեցաւ յատուկ մեր հանդիսի համար)

ճանու թեան, և սկսաւ
շուրջ 2000 կտոր ձե-
ռագիր գրեանքն ցու-
ցակագրել հանդերձ
նոցա վերայ տեղի-
կութեամբք:

1857 թուին փա-
վաքելով Ս. Տեղեաց,
Կիլիկիոյ և Անույ
հնու թիւններն ա-
րևանկարով կենդա-
նագրել, նոյն արհես-
տին պարագեցաւ և
1859 ին Պօլիս զի-
մեց, որ զայն կատա-
րեալործէ: Յետոյ
գնալով 'ի Փարիզ և
'ի Մանչեսթրը կա-
տարեալ յաջողու-
թիւն ստացաւ այս
արհեստին մէջ և նոյն
առթիւ Կալէանօջա-
պիկ զբաղեցաւ և
ձեռք բերաւ:

1863 ին դառնալով յԵրուսաղէմ մի քանի ամիս
յետոյ ազգէն և միաբանութենէն Պատրիարք ընտ-
րուեցաւ և 1864 ին Կ. Պօլիս գնաց, որ Ս. Աթոռոյ

և ազգին մէջ յարաբերութեանց մասին բանակցի և Ազգային-Մահմանադրութեան վերայ ուխտ ընէ:

Նոյն ատենէ ՚ի վեր Եսայի Պատրիարք մասնաւոր փոյթ և խնամք ունի վանուց Թանգարանին վերայ, որ իւր արդեամբը կարգաւորած է: Ժառանգաւորաց Ուսումնարանն ևս պայծառ մի վիճակի մէջ գրած է, նոյնպէս և արեւանկարի և այլ արհեստից զարգացմանն անխոնջ կ'աշխատի: Բայց Նորին Սրբապնութեան այժմուս գլխաւոր ճիգն Ս. Աթոռոյն պարտուց բարձմանն վերայ դարձած է:

Ազգայնոց առատաձեռնութիւնն և Եսայի Պատրիարքին ամեն ուրէք ստացած վարկն ու համարումն կրաշխաւոր են, որ մեր ազգային հաստատութիւններէն ամենէն հնագոյնն պիտի ազատի շուտով այդ ծանր բեռի ներքեւէն և Երուսաղէմայ Ս. Աթոռն օր քան զօր զարգանալով ազգիս իրաւամբ պարծենալի հաստատութիւններէն մին պիտի լինի, ուր ամեն տարի Հայոց ջերմեանդ մի բազմութիւն աշխարհիս ամեն կողմէն կը խոնի և մխիթարեալ հոգևով կը դառնայ իւր հայրենիքն:



ՔԱՆԻ ՄԻ ԽՕՍՔ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ՆԵՆՍԱԿՐՈՒԹԻՒՆԵՑ *):

ԵՐԵՒԵՂԻ նկարիչ Յովհաննէս Աստանտեան Այվազովսկու նախնիքը Տաճկաց հպատակներ էին և մահմետականների Ղուբանն էին դաւանում: Նկարչի հանգուցեալ հայրը պատմում էր նորան, թէ նոցա պապը Աղօվի նուաճման միջոցին, 1696 թուականի Յուլիսի 18 ին, քիչ մնաց, որ զոճ դառնար Ռուսաց զօրքերի կատարութեան և միայն մի զինուորի շնորհիւ կարողացաւ ազատուիլ անխուսափելի մահից: Նոյնը վկայեց Յովհաննէս Աստանտեանն, նաև Առնոստիս Անտոնիան Վարդապետ Բլուզովան, ասելով՝ թէ ինքն մի հին գրքի մէջ կարդացել է այդ իրողութեան մասին, որ վերաբերվում է Այվազովսկիների տոհմական աւանդութեանց: Խօսելով Այվազովսկու ծագման վերայ տաճիկ ցեղից, կոմսոսի նկատել է հետևեալն՝ «թէպէտ և մահմետական Արևելքը ուժգին ատում է Ռուսիան, բայց պարզեւեց սորան երկու բանաստեղծներ, այն է՝ Դուկովսկուն և Պուշկինին ու մի գիւղարուեստական նկարիչ՝ Այվազովսկուն»: Յովհաննէս Աստանտեանի հայրը, որ իւր ազգանունը գրում էր Հայվազովսկի, հաւատով Հայ-Ղուսաւորչական դաւանութեան էր պատկանում իւր բոլոր ընտանիքով, երէց որդին՝ Վրիգորը, քաղաքական ծառայութեան մէջ լինելով, Թէոդոսիայի նաւահանգստի պետ էր. իսկ այժմ արձակուրդ ստացած ապրում է նոյն քաղաքում: Հայվազովսկու միւս որդին Վարդիէլը՝ ներկայ ժամանակիս (1878 թ.) եպիսկոպոս Խմբեւոյի և Հոգևոր Կառավարիչ Արեւազեան վիճակի, 1858 թուին հրաժարուցաւ ընդունել Թուրքիոյ Հայոց բոլոր ուսումնարանների ընդհանուր գլխի պաշտօնը ու կոչումն, որ միաձայն հաւանութեամբ առաջարկում էին նորան Կ. Պօլսոյ Հայերը:

Այվազովսկիները անցեալ դարում Թուրքիայից գաղթեցին դէպ ՚ի Վարդիէլ, ուր մինչև այժմ ևս, Խլով քաղաքի մօտ, գեւ կան կալուածատէր Այվազովսկիներ, որոնց նախահայրը Աւարիացոց Կայսրից ազնուականութիւն ստացաւ: Եղբարք Այվազովսկիները Վարդիէլ և Յովհաննէսը, համաձայն իւրեանց ազնուականութեան հրովարտակին, 1840 թուականին, փոխեցին Հայվազովսկու ուղղադրութիւնը աւելի ճիշդ ազգանուան, որին հետևում են մինչև մեր օրերը:

Այվազովսկին-Հայրը, ընտանեկան տարաձայնութեան պատճառաւ, որ տեղի ունեցաւ նորա ու հարազատ եղբարց մէջ, իւր երիտասարդ հասակում դուրս գաղթելով Վալի-

ցիայից, եկաւ ու բնակեցաւ Վալարիայում և Մօլդաւիայում, ուր սկսեց պարապել վաճառականութեամբ: Նա քաջ գիտէր Տաճկաց, Հայոց, Հունգարաց, Գերմանացոց, Հրէից և Յիգանների լեզուները, բաց ՚ի գորանից տեղեակ էր նոյնպէս արդի Գանուպեան Խշնանութեանց համարեա թէ բոլոր բարբառներին: Փոքր ժամանակից յետոյ, յիշեալ երկիրներից տեղափոխուեցաւ դէպ ՚ի Ղրիմ. այս տեղ 1812 թուականին, Այվազովսկին-Հայրը զոչուցեաւ իւր կայքի մեծագոյն մասից, ժանտախտի պատճառաւ, որ սարսափելի զոհեր էր տանում Թէոդոսիայի բնակիչներից (1812 թ.): Իւր կրտսեր որդու ծննդեան միջոցին Յովհաննէս Այվազովսկին հարուստ մարդ չէր. նա իւր ընտանեաց կենսական պիտոյքները հայթայթում էր դատաստանական և առևտրական գործերով. Թէոդոսիայում ունէր իւր սեպհական տնակը:

Յովհաննէս Աստանտեանը ծնաւ այս քաղաքում 1817 թուականի Յուլիսի 17 ին: Նախնանամութիւնը, կարծես, նշանակելով նկարչին նորա հանդերձեալ ապագայի համար, կեանք պարզեւեց նորան սև ծովի եզրերին, դէմ յանդիման այն տարրի, որին, հուսկ յետոյ, նա այնքան յաճախակի կենդանագրում էր և տակաւին շարունակում է կենդանագրելու իւր դիւթիչ վրձնի միջնորդութեամբ: Մանուկ հասակից Այվազովսկու հայեացքը ընտելացաւ ծովի լայնածաւալ տարածութեան. իսկ լսելիքը անլուրի աղաղակին և փրփրող ալիքների շառագման: Մտաբերելով իւր մանկութիւնը և պատանեկութիւնը Յովհաննէս Այվազովսկին ճշդիւ չէ՛ կարող բացատրել՝ թէ ի՞նչ ժամանակից նա զգաց իւր մէջ նկարչական ստեղծագործութեան առաջին կայծերը. բայց սէրը դէպ ՚ի երաժշտութիւն և նկարչութիւն զարգացաւ նորա մէջ շատ վաղ և կարելի է ասել, աճում էր նորա հետ ՚ի միասին: Գեւ իւր մանկութեան 10—12 տարեկան հասակում Այվազովսկին ինքնուս կերպով ջուրմակ էր աճում և պարապում էր հասարակ նկարչութեամբ օրինակելով լիտոկրաֆիական նկարներից և վատագոյն գուավիւրներից՝ Յունաստանի ապստամբութեան պարազուխ՝ Ամարիս, Միաուլի, Բարսիլնա դիւցազանց պատկերները և կամ Վառնայի, Սիլիստրիայի և միւս բերդերի նուաճման տեսարանները 1828—1829 թուականների պատերազմի ժամանակ:

*) «Русская Старица» ամսագրից (Апр. 1878 г.):

Չբաւականանալով լոկ թղթի վերայ մատիտով նկարելուց, պատանի Այվազովսկին մի անգամ, իւր հօր տան արտաքին պատերի վերայ նկարեց մի զինուորի կերպարանք նորա բնական հասակով: Այս զինուորը չափազանց գրաւում էր Պարսիմների հետաքրքրութիւնը և նորա անցուղարձ անելիս, խումբ խումբ կանգնած, միամտութեամբ զարմանում էին մանուկ նկարչի վարպետութեանը: Այվազովսկու հօր ծանօթներից մինը՝ քաղաքային ճարտարապետ Պօխը ուշադրութիւն դարձրեց պատանեկի դէպ 'ի նկարչութիւն ունեցած հակման վերայ և կամենալով զարգացնել նորա մէջ ակներև հանձարի նշանները, սկսեց առանձին դասերով ուսուցանել նորան perspectiveի տարրական կանոնները և ճարտարապետութեան վերաբերեալ մանրամասնութեանց գծագրութիւնը: Այդ առաջին դասերը Յովհաննէս Պատանդեանի խօսքերով, նորան մեծ օգուաներ բերեցին և երախտապարտ նկարչը մինչև այսօր ևս անկեղծ շնորհակալութեամբ յիշում է հանգուցեալ Պօխի անունը:

Սոյն իսկ ժամանակ Այվազովսկին յաճախում էր նաև թէոզոսիայի գաւառական ուսումնարանը, ուր բաց 'ի Ռուսաց լեզուից ջերմեռանդութեամբ պարապում էր Տաճկաց և Հայոց լեզուներով: Ազատ ժամերը նա նուիրում էր երաժշտութեան և նկարչութեան: Սուր լսողութեան շնորհիւ մանուկը հեշտութեամբ պահում էր մտքում տեղական երգերի եղանակները և մեծ ճշդութեամբ կրկնում էր այն ջութակի վերայ: Մի օր քաղաքապետ Ալեքսանդր Իվանովիչը Վազնաչէեվը, անցանելով ծովի եղերքով Այվազովսկու տան մօտից, տեսաւ պատուհանի վերայ նստած երիտասարդ երաժշտին, որ ջութակ էր ածում: Այվազովսկին ամաչելով, թաքցրեց ջութակը մէջքի ետևը. բայց Վազնաչէեվը անուշութեամբ խնդրեց նորան շարունակել և շատ գովեց վարպետութեան համար: Այսպէս եղաւ Այվազովսկու առաջին ծանօթութիւնը այն մարդու հետ, որ յետոյ մեծ ազդեցութիւն ունեցաւ նորա բոլոր ապագայի վերայ:

Երկու շաբաթից յետոյ, Պօխը այցելելով Ե. Ի. Վազնաչէեվին ցոյց տուեց նորան Այվազովսկու նկարները. «Ես կ'ցանկայի մօտ ծանօթանալ նորա հետ», ասաց քանքարաւոր պատանեկի ապագայ խնամածուն և հետևեալ իսկ օրը, տղան իւր հօր և Պօխի ուղեկցութեամբ, ներկայացաւ Ալեքսանդր Իվանովիչին: Փաղաքչելով փոքրիկ Այվազովսկուն՝ Ե. Ի. Վազնաչէեվը ընծայեց նորան մի արկղիկ լին ջրեղէն ներկերով ու մի քանի թերթ նուրբ թուղթ նկարչութեան համար: Վտորանից լաւագոյն պարգև էր կարելի տալ տաղանդաւոր պատանեկին, որ մինչև այն

ժամանակ սովոր էր մատիտով նկարել ձեռքին ընկած թղթի կտորների վերայ: Բաց 'ի սորանից Ե. Ի. Վազնաչէեվը ծանօթացրեց փոքր Այվազովսկուն իւր որդու հետ, որ նորան հասակակից էր տարիքով ու այնուհետև չքաւոր տղայի առաջ բաց էին նորա հիւրասէր տան դռները: Ամբողջ մի տարի (1829—1830) Այվազովսկին յաճախում էր Ե. Վազնաչէեվի ընտանիքը: 1830 թուականին Տարիկեան «Նախնադպրոցական նշանակուած Ալեքսանդր Իվանովիչը տեղափոխուեցաւ Սիմֆերոպոլ քաղաքը, ուր հետը տարաւ նոյնպէս և Այվազովսկուն. սա մտաւ այն տեղի գիմնազիոնը, ուսումը շարունակելու: Սիմֆերոպոլում Վազնաչէեվի ընտանեաց ծանօթների շրջանը աւելի ևս մեծացաւ. նոցա սերտ բարեկամներից մինն ևս՝ Նատալիա Ֆէոդորովնա սիկին «Նառըշկինան էր (Պոմն Ռոստոպչինի դուստրը), որ ապրում էր քաղաքից դուրս:

Երիտասարդ Վազնաչէեվը և Այվազովսկի ամենայն կիւրակէ օրերը յաճախում էին նորա տունը, իբրև ընկերակիցներ նորա որդու Ֆէոդոր Վախրիեվիչի: Մի անգամ իւր այցելութեան ժամանակ Այվազովսկի առաջարկեց Ֆ. Վ. «Նառըշկինին նկարել նորա համար Հրէաներ և նոյն միջոցին նստեց ու նկարեց մի խումբ Հրէաներ նոցա աղօթարանում: Երիտասարդ «Նառըշկինը ցոյց տուեց այս նկարը՝ Նատալիա Ֆէոդորովնային, որը վրայ մանուկ նկարչի տաղանդը այնքան մեծ ազդեցութիւն ունեցաւ, որ նա իսկոյն վճռեց իւր մտքում հոգալ նորա ապագայի վերայ: Չտեսածելով իւր աղին դիտաւորութիւնը, «Նատալիա Ֆէոդորովնան Այվազովսկու նկարները ուղարկեց 'ի Մոսկուա՝ Տօնչի ճարտարապետին, աղաչելով վերջինս բարեխօս լինել քանքարաւոր տղայի համար Վայսեր առաջ: Տօնչին նկարները յանձնեց Իշխան Պ. Մ. Վ. Օլիոնսկուն, որ իւր կարգին ներկայացրեց նոցա Վայսեր «Նիկոլայ Պաւլովիչին:

Վ. հասփառ ջատագովը ժողովրդական հանձարների՝ հաճութեամբ վերաբերվեցաւ մանուկ նկարչի առաջին փորձերին և հրամայեց Իշխան Վ. Օլիոնսկուն Պեղարուեստականաց Ահադէմիա տալ Այվազովսկուն «Նորին Վայսերական Մեծութեան Վաբինտի հաշուով: Այվազովսկու՝ Սիմֆերոպոլի գիմնազիոնից՝ Ահադէմիա փոխուելու հրամանը ստացուեցաւ նոյն միջոցին, երբ ինքն պատանին արդէն ճանապարհ էր ընկել դէպ 'ի Ս. Պետրբուրգ, ուր նա ժամանեց Վարվարա Արկադիեվնա Բաշմակովի (երբեմն Իշխանուհի Խապրիական և Պոմնուհի Սուլօրովա-Ռըմնիկսկայա) ընտանեաց հետ: Այվազովսկին գիմնազիոնի միջին դասարաններից դուրս եկաւ:

(Մ'նացորդն յաջորդ տետրում):

ՆՁ, ՅՁ

ՇԻՐԱԿԻ ՄԻ ՔԱՆԻ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Շարունակութիւն)

ԱԳՐԱԿՈՒ ՎԱՆՔԸ:

ՄՆԾՎՈՒՄԻ մենաստաններից գրեթէ 3 վերստաչափ հեռաւորութեամբ դէպ 'ի արևմտա-հարաւ ընկնում է Ագրակ կամ Ագարակ գիւղը իւր հրաշափերտ մենաստանով:

Գիւղը բաղկանում է մօտաւորապէս 40 տուն

Հայ բնակիչներից, որ և զրուած է Եղըւճայ լեռան ստորոտը՝ մի լայնասարած բարձրաւանդակի վերայ:

Վանքը՝ որ գտնվում է գիւղից դուրս, նորա հարաւային կողմում, շինուած է ՆԾԵ (455) հայկական թուականին, կարմիր, գորշ և թուխ քարերով, սուրբ Սանիաննոս—Նախավկայի անու-

նովը 1), և շրջապատուած է հազարաւոր տապա- նաքարերով, որոնք պատկանում են հին և նոր դարերի ննջեցեալներին:

Ս. Ստեփաննոսի վանքը մի ուրիշ տեսակ շէ- նութիւն է, որի նմանը մենք չ'տեսանք Բէշլէի- օայում: Բաղկացած է 22 մասերից կամ առանձին անկիւններից, որոց մի քանի մասերը կազմում են լայն-լայն խորշեր. շրջապատը 25 սաժին է: Ունի երկու դռներ հիւսիսային և արևմտեան կողմերում և 14 պատուհաններ, որոնցից 4ը կաթողիկէի և մնացեալ 10ը եկեղեցու միւս 22 մասերի միջից են:

Արևմտեան կիսաբոլոր որմը, որ բաղկացած է 10 անկիւններից և հարթ մասերից ու խորունկ լայն լայն խորշերից, կէս սաժինաչափ թաղուած է գեանի մէջ: Բոլոր ցածրի աստիճանները ծած- կուած են քարի և հողի կոյտերի տակ: Արևմտեան դռան կէս մասը բոլորովին խրուած է հողի մէջ, իսկ մնացեալ մասն շարուած է մանր քարերով, որով և արգելվում է այդ կողմի մուտքը: Այս դռուը ներկայացնում է մի անպաճոյճ շրջանակով միմեանց կից, երկու երկու բոլորշի սիւնակներ, որոնք դրուած են մուտքի աջ և ձախ կողմերում. այս խարխիւների զոյգ ճակատներին փորուած են կլորակ զիւքով խաչարձաններ, իսկ նոցա բարձրում զըր- ուած են գեղեցիկ, քանդակագործ խոյակները ի- րենց վերի և ներքի նեղ գառնիղներով: Պաան բարձրից անցնում է գեղեցիկ փորուածքներով զարգարուն մի լայն շերտ կամ դօտի, որը հաւա- սար կերպով անցնում է և եկեղեցու բոլոր մա- սերովը: Այն տեղ, ուր մեծիակ պատուհաններն են, գօտին ստանում է մի տեսակ աղեղնաձև կեր- պարանք:

Պաան ձախ կողմի նախ հարթ և ապա լայն ու եռանկիւնի խորշը անցնելով՝ գտանվում է գեանից հազիւ թէ մէկ արշին բարձրութեամբ որմի մի ուրիշ մասի կենդրոնում փորուած կլորակ շրջա- նակով մի այլ քառաթև խաչ:

Արևելեան որմը իւր հինգ մասերով կամ վեց անկիւններովը, դրուած է երեք կարգ սանդուխների կամ աստիճանների վերայ. կենդրոնի 3 մասերի վե- րայ մի մի հատ մեծիակ պատուհաններ կան, որոց վերայով անցնում է քանդակագործ գօտին. սոցա միջին պատուհանի ներքև փորուած է մի քառաթև խաչ բոլորակ շրջանակով: Այս որմի ծայրերի եր- կու մասերի մէջ գտանվում են մի մի հատ միւսնե-

րից ցածր, նեղ և փոքր պատուհաններ աղեղնաձև կամարով, որոնցից ներքև փորուած են քառա- կուսի շրջանակներով միմեանց համաչափ զոյգ խա- չեր, մանր, բայց նուրբ քանդակներով:

Արկրորդ դուռը հիւսիսային կողմից է, արև- մտեան որմին յար և նման, քառակուսի դիւքով և անպաճոյճ կամարով, որի ճակատին զրոշմուած է մի քանի շարք հայկական տառեր, որ տեղ տեղ աղաւաղուած և տեղ տեղ ևս քարերից թափուած լինելու առթիւ, մեծ դժուարութեամբ կարող եղայ կարգաւ, որի բովանդակութեան հետ պիտի ծանօ- թացնեմ ընթերցողիս իւր տեղում:

Հարաւային կողմում գտանվում է հայկական տառերով մի փոքրիկ արևանիշ ժամացոյց:

Պատի բոլոր մասերի վերին կողմերովը անցնում է տեղ տեղ աւերուած և փշրուած քանդակագործ գառնիղը:

Չեղունը մերկացած է գրեթէ իւր բոլոր, ար- տաքին կողմից, սրբատաշ քարերից, հեռուապէս և հարթ դրութիւնից. սրբապիղծ ձեռքերը նորան մի կանաչախիտ բլրակի ձև են տուել...

Չեղունի կեդրոնից բարձրացած է սկզբում թիրևս կոնաձև, բայց այժմ աղեղնաձև կամ զլանաձև գմբէթը, որը բաղկանում է ութը հարթ մասերից քանդակագործ գառնիղով և, գեղեցիկ կամարների տակ պահուած, չորս պատուհաններով:

Յարտաքուստ գմբէթը մերկացել է իւր կոփա- ծոյ քարերից և միայն պահուած է ներքին կողմի մի շարք խախտուած քարերը:

Ի ներքուստ Ս. Ստեփաննոսի դիւքը խաչաձև է, ձեղունը չորս հատ բազմաձայ և կիսաբոլոր խարխիւների կամ որմնասեանց վերայ բարձրացած է: Ունի զոյգ մանր խորաններ և մի լայն սեղան: Անութիւնը ըստ մեծի մասին թուևս և գորշ քա- րերով է. ժամանակի աւերիչ հոսանքը և անգութ մարդկանց հարուածները տեղ տեղ իսպառ կոր- ծանել և բացել են. ես հաւատացած եմ, որ եթէ մի քանի տասնեակ տարիներ ևս այս մենաստանը մնայ առանց հարկաւոր տեղերը ամրացնելու, անշուշտ մի մեծ քարի և հողի կոյտ պիտի ընծայէ մեզ...

Հիւսիսային դրան արձանագրութիւնը, որ զըր- ուած է ՆՕՆ թուականին, պատկանում է Պէորդ անուկով մի անձնաւորութեան, որը նուիրելով կաթողիկէին մի ձիթահանք, պարտք է դրել Պէորդ երէցի և հայր Աբրահամի վերայ եօթը պատարագ անել իւր հոգու փրկութեանը համար:

Արկրորդ արձանագրութիւնը ստում է, որ Մգրի Սահակի որդի կաղզուանցի Արապիսը, տուել է իւր սեպհական տունը եկեղեցուն, հակառակողը Աստու- ծոյ առաջև «փքր կոչեսցի»:

1) Եւ ոչ Ս. Աստուածածնայ, ինչպէս կատարագրէ Հ. Զա- լախանը իւր «Ճանապարհորդութիւն ՚ի Մեծն Հայաստան» վերնագրով աշխատասիրութեան Բ. մասումը, որը ողբան ինձ աջողուեցաւ զննել և համեմատել բնագրերի (արձանագրու- թեանց) հետ, ըստ մեծի մասին շեղուած է ճշգրութիւնից...

Երբորդը յիշում է, որ մի Ենանիկ անունով մարդ տուել է կաթողիկէին իւր ջրովն արար, ով որ հակառակի Եսաուծոյ առջև „փոքր կոչեցի“:

ՆՇԻԱՐԵՏԱՆ ՄՆԱՑՈՐԴԷ:

Եյս կեղեցու հանգէպ, զէպի հիւսիս 1 1/2 սաժենաչափ հեռաւորութեամբ, գտանվում է մի շինութիւն կարմիր և գորշ կոփածոյ քարերով հաստատուած, ունի հարաւից, առանց զարդարուն շրջանակների երկու քառակուսի դռներ: Քառակուսի զիրք ունի, առանց պատուհանի:

Չիղունը իսպառ կործանուած և բացուած է:

Բացի արևելական որմը՝ որ բոլորովին աւերուած է և ազդնաձև զիրք է ունեցել, միւս երկք կողմերի պատերը մնում են անխախտ 2 սաժեն բարձրութեամբ: Ի ներքուստ հիւսիսային և հարաւային որմերը երկքական հանդիպակաց որմնասիւններ ունեն, որոց վերայից, նկատելի է, որ բարձրանալիս է եղել կամարակապ ձիղունը: Ինչպէս տեղական



ԱԳՐԱԿՈՒ Ս՝ ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅԻ ՎԱՆՔԸ:
МОНАСТЫРЬ СВ. СТЕПАНА.

(Պատկերն նկարեցաւ և փորագրեցաւ յատուկ մեր հանդիսի համար)

բնակիչները պատմեցին՝ սա ունի նաև կամարակապ ներքնատուն: Ես կարծում եմ, որ սորա շինութիւնը Ս. Ստեփաննոս Վանքին ժամանակակից պէտք է լինի, հիմնարկուած նախ քան ՆՇԻ թուականը, իսկ թէ սկզբում ինչպիսի հիմնարկութեան տեղ ծառայելիս է եղել, դժուար է բացատրել, բայց հաւանական է, եթէ ոչ յաջորդարան՝ գէթ նշխարատուն անուանել:

ՏԵԿՈՌՈՒ ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ ՎԱՆՔԸ:

Տեկոս գիւղը ընկնում է Բէշքելիսայից 5—6 վերստ հեռաւորութեամբ նորա արևելեան հարա-

ւային կողմը, մի տափարակ հովտի վերայ, որ և սկիսուած է, հիւսիսային և հարաւային կողմերից, զոյգ հանդիպակաց քարախիտ բլուրներով:

Վիւզի միջից անցնում է Բէշքելիսայի վճիտ առուակը իւր մեղմ սղոյջակներով, որի զոյգ ափերում մի ժամանակ զրուած էին զեղեցիկ և պողաւէտ այգիները իրենց անհամար ընկուզներիով: այգ այգիները 1877 թուին, ս.ու.ս. թուրքական պատերազմի ժամանակ, յաճախող Ռուս զօրքերը արմատախիլ արած են, որոնց տեղերը այսօր ներկայացնում են մի տեսակ ամայացած և դատարկ զեան, որի վերայ տեղ-տեղ միայն նկատելի են աւերուած շրջապատների հետքերը:

Վիւզից դուրս, զէպի արևելահարաւ զարու ուղիների կուրծքին նստած է հսկայական զիրքով հրաշակիրա մենաստանը իւր բարձրաբերձ դմբէթով:

Եյս կեղեցին որ շինուած է սուրբ Երբորդութեան անունովը, քառակուսի զիրք ունի և բացի հարաւային որմը, որի սանդուխները ծածկուած են հողի և քարի կոյտերով, միւս երկք կողմերն ևս հա-

ստատուած են բազմաստիճան սանդուխների վերայ կառուցել է նորան Սահակ Աամնարականը վեցերորդ դարի կիսում:

Եկեղեցու կէս մասը հաստատուած է գորշ և կէս մասն ևս կարմիր կոփածոյ քարերով, որից և հեռուում է այն կարծիքը, թէ կիսով չափ աւերուած լինելու առթիւ, վերստին նորոգուած է:

Երևմտեան որմը հինգ աստիճան սանդուխների վերայ զրուած է և ութ սաժեն երկարութիւն ունի: հիմքի հետ բարձրանում են, որմին կից, վեց հաս քառակուսի որմնասիւններ իրենց բազմաբանդակ և զարդարուն վերնախարխալներով, որոնց զազաթից խոնարհուող կործանուած շրջանակները

հաստատում են, որ այս որմի հանդէպ եղիլ է և մի ուրիշ եկեղեցու կից շինութիւն, թերևս զանկահատուն կամ նշխարատուն:

Այս կողմից մի դուռն ունի, որ մանր քարերով շարուած է մօտ ժամանակներումս: Այս մուտքի աջ և ձախ կողմերից խարխիսների և աղեղնաձև քանդակագործ կամարի վերայ կատարելապէս փայլում է Բիւզանդական ճարտարապետութեան հետ նաև հայկական քանդակարար:

Գուան շրջանակի վերայով անցնում է մի զարդարուն դօտի, որ պատի աջ և ձախ ծայրերում գտանուող մեծկակ պատուհանների վերայ ձգուած՝ կազմում է առանձին առանձին աղեղնաձև շրջանակներ: Այս դօտիի սակաւ ինչ բարձրը, պատի կենդրոնում, երկու հաս երկար և նեղ պատուհաններ կան, որոց վերայ դրուած են մի մի զոյգ քանդակագործ կամարներ:

Այս երկու պատուհանները սեխմում են մի կլորակ շրջանակով քառաթև խաչ. սոցա վերայ ձգուած է մի ուրիշ բազմաձաղ դօտի կամ գառնիզ, որի վերայ գտանվում է քառակուսի շրջանակով մի բոլորշի խաչաձև պատուհան, սորա ցածրի, երկու թևերի ներքև քանդակուած կան երկու մարդկանց միմեանց համանման կիսատ արձանները, նրանց բարձրը, պատուհանի երկու վերին թևերի վերայ փորուած են զոյգ Արծիւներ, որոնք կոցահարում են խաղողի ողկոյզները: Մարդկանց արձանները շինուած են միմեանց հանդէպ. դոքա առանց ընչացքի և առանց մօրուքի են, որով փոքր ինչ կանացի պատկերների նմանութիւնն են բերում: զոցանից մինը թերևս երջանկայիշատակ հիմնադրի, Սահակ Ամնարականի արձանը լինի:

Հիւսիսային որմը 12 սաժն երկարութիւն ունի և բարձրանում է 1½ սաժ. լայնութեամբ քարայտակ հինգ սասիճան սանդուխների վերայ: Ունի վեց հաս կլորակ որմասիւններ իրենց բարձրի և ցածրի բազմաքանդակ խոյակներով: Այս կողմից եկեղեցին երկու դռներ ունի, որոնք յար և նման են արևմտեան մուտքին, բայց սոցա քանդակագործութիւնքը աւելի զմայլեցուցիչ են և տեսալիներով աւելի շատ, քան արևմտեանինը. ձախ կողմի դռան կիսաբոլորակ կամ աղեղնաձև շրջանակի ներքև դրուած են մի կարգով և կլորակ շրջանակներով երեք հաս խաչարձաններ. սոցա ներքևից ձգվում է քառակուսի դռանը շրջապատով տեղ տեղ գալարուն և տեղ տեղ ևս շղթայաձև մանր և խոշոր փորուածքները, որոնց սեխմում են երկու կողմերի միանման գաւազանաձև զոյգ զոյգ սիւնակները իրենց բազմախորշ կամ բազմաձաղ վերնախորիւններով. իսկ այս վերջնոց վերայ յինուած է

անպաճոյճ շրջանակը: Միւս դուռը՝ որ երկու որմնասեանց միւս մասից բացուած է, յար և նման է սորան, այն զանազանութեամբ միայն, որ սորանում փոխանակ 3 խաչարձանների՝ մի քանի շարք հայ տառեր կան դրոշմուած:

Որմնասեանց և դռների վերայով անցնում է մի զարդարուն դօտի կամ գառնիզ, որ անցնելով 3 մեծկակ պատուհանների շրջանակներով շեղվում է ուղիղ գծից և ստանում է կամարաձև կերպարանք: Պատուհանները բացուած են՝ մէկը երկու դռների մէջ տեղում, երկրորդը աջ, իսկ երրորդը պատի ձախ ծայրերում:

Այս ներքին դօտուց փոխվում է քարի գոյնը, զորչեց դէպի կարմիր և սակաւ ինչ բարձրանալով, ձգվում է երկրորդ գառնիզը, որի վերայից և դրուած են զոյգ պատուհանները իրենց երկու-երկու կարգ քանդակագործ շրջանակներով. սոցա բարձրից անցնում է մի այլ դօտի, որի բարձրում տեղ-տեղ նկատելի է որմի վերին գառնիզը:

Այս պատի հանդէպ մի ժանանակ եղիլ է սիւնազարդ զանկահատունը, որ այժմ խապտա աւելուած է: Աջ կողմում մի սիւնաւոր կամարակապ խորան կայ գեղեցիկ շրջապատով, կիսաբոլոր խարխիսներով և քանդակագործ վերնախարխիսներով:

Հարաւային որմը բոլորովին նման է հիւսիսայինին, այն փոփոխութիւնով միայն՝ որ այս կողմից եկեղեցին մուտք չունի և ոչ ևս հիւսիսայինի չափ զարդարուած է:

Արևելեանը հինգ հարթ մասերից կամ վեց անկիւններից բաղկացած մի պատ է, որոնցից կենդրոնի մի մասը, որ սեղանի արտաքին կողմին է, աւելի զուրս է միւսներից, սորան կից եռանկիւնի զիւքով թեքվում են գէպի ներս միւս երկու մասերը, իսկ սոցա հետ միացած են պատի աջ և ձախ ծայրերի լայն և հարթ մասերը: Այս պատը՝ որ դրուած է հինգ սասիճան կամ հինգ կարգ սանդուխների վերայ, ունի 11½ սաժ. երկարութիւն:

Վերջոնի երեք մասերի վերայով անց են կենում զոյգ դօտիները, որոց բարձրում մի պատուհան կայ ծաղկանկար շրջանակով և զարդարուն կրկնակամարով: Որմի զոյգ ծայրերի երկու մասերի վերայ ևս գտանվում են երկուսական հաս հասարակ և փոքրիկ պատուհաններ, որոնք ծառայում են խորաններին լոյս սփռելու:

Բոլոր որմերի կատարներից ևս անցնում է վերին գառնիզը, սոցա վերայ յինամ են ձեղունի սրբատաշ քարերը իրենց խիտ և ճառագայթաձև շերտերով: Չեղունը խախտուած է և, կարելի է ասել, որ իւր վերջին օրհասին մերձեցած. սորա մէջ տեղում դրուած է մի քառակուսի գառնիզաւոր

չէնք չորս պատուհաններով: Սորա վերայից բարձրանում է կաթողիկէի 8 նեղ կողմերի բաժանուած քանդակագործ-գաւնիլաւոր ներքին մասը և նորա վերայ կոնաձև գմբէթը իւր ուղիղ և եռանկիւնի ձևով ձգուած անպաճոյճ շերտերովը:

Չեղունի ցածր մասերը տեղական բնակիչները հարթիլ են չորս եռանկիւնաձև գաղաթների հետ, ամրացրել են մանր քարերով, որ մի վիթխարի պատնէշ է ներկայացնում: զորա մէջ պատերազմների ժամանակ պատասպարուել են և իւրեանց կեանքն ու գոյքը պահպանել են հայր թշնամու և առ հասարակ անկանոն զօրաց և քիւրզ աւաղակաց արշաւանքներից: այդ միւսնոյնը արեցին Տեկոսցիք նաև այս վերջին Ռուս-թուրքական պատերազմի ժամանակ:

Ի ներքուստ հաստատուած է թուխ և գորշ քարերով: գմբէթը բարձրանում է 4 քառակուսի մեծ և բազմաձալ սեանց և 6 որմնասեանց վերայ: Բոլորակ սեղանը կապուած է մի լայն-աղեղնաձև դօտիով: Սեղանի շրջապատը միանալով երեք միւս կամարների հետ, կազմում է մի մեծ բոլորակ իւր քանդակագործ մեծ և լայն գաւնիլով:

Պատերի մէջ երկու-երկու կարգ փայտեայ խաթիլներ կան դրուած, որոնք դարերի հոսանքին չկարողանալով դիմանալ այժմ փոշիացել և մասամբ քարացել են, դոցանից և հեռեւել է եկեղեցու ցնցումը ու ձեղքուածքները: այս եկեղեցին վերանորոգման և գէթ փոքրաւեր տեղերը ամրացնելու այժմէն իսկ հարկաւորութիւնը ունի:

Ի ներքուստ արևմտակողմում աւանց մակապրութեան, քանդակներով զարդարուած, զեանից 10 վերջոքաչափ բարձրութեամբ մի տապանաքար կայ, որի մասին պատմվում է աւանդութեամբ, թէ սորանից մի քանի դար առաջ Տեկոսում վաղճանուելով՝ այդ տեղ ամփոփուած է մի բարեպաշտ և աւաքինի քահանայ: այս աւանդական պատմութիւնը կարծում եմ, որ ստուգութեան կարօտ է:

Սեղանի երկու կողմերում ևս կան մի-մի խորաններ, ուր պահվում են եկեղեցու այս աւուր ունեցուածքները:

Այստեղ կատարվում է ամենայն օր ժամերգութիւն: ունի մի պատուական երիտասարդ քահանայ, որպիսին թէև ժամանակի ոգուն փոքր ինչ անյարմար, բայց համեմատելով այս գաւառի քահանաների հետ, «պատուական» անականով զարդարելու համար ինձ սխալուած չեմ կարծում:..

Ունի ընդ ամենը 18 պատուհաններ:

Վանքի արևմտեան և հարաւային կողմերը շքեղապատուած են խիտ գերեզմաններով և քարի ու հողի շեղջ-շեղջ բլրակներով:

Ունի երեք կտոր արձանագրութիւններ, որոնցից

առաջինը, որ արևմտեան դռան շրջանակի ներքև փորագրուած է, օրինակելով՝ այստեղ կ'ստորագրեմ 1):

«Թախն Նի: Յանուն Աստուծոյ ես Խորովանուշ հայոց թագուհի հաստատել եմ զՏեկուոսայ շարիտան յեղն... արդ մի՛ սք իշխեսցե լուծանել ՚ի սուրբ Երրորդութենէ:»

Հիւսիսային պատի արևմտեան ծայրումը դրոշմուած է հետևեալ յիշատակարանը՝

«Ի ՆԾԻԷ Թաւահանութեան հայոց ՚ի Թագաւորութեան Յուհաննէսի Շահանշահի և ՚ի հայրապետութեան Տեառն Պետրոսի որ է հայոց վերագիտողն և ՚ի Տերութեան Սարգսի արեւելց դոկիս Ես հայր Շահիկս և եկեղեցականս միաբան եղբայրքս Խնձկանից վանսն Տեկուոսայ ջոշոս և ագարակաց ուղեւոյ վերջին առաջն Թագաւորութեան վայելէ Գ աւուր և ՚ի գիշեր Տեկուոսայ և Գ աւուր և Գ գիշերուոյ Ազրիուց հարցի ձերս և դիտողսն լով սք և երգնու... թէ սք հակառակ կայ յժը հայրապետաց նորովքն և բաժին ընդդէմ սք գայթակղե եղեցի ընդ Աստուածավաճառան և ընդ այրոց չաբագործաց որք տտելն են քրիստոսի ՚ի գարնամակն վեր մինչև յաշունն հանապաղ գայր ջուրն լերինն անխափան:»

Այս արձանագրութիւնից կարելի է կրակացնել, որ շատերի համոզմունքը, թէ Խնձկոնում գիւղ է եղել բազմաթիւ բնակիչներով և թէ Խընձկոնը Անի քաղաքի մի թաղն է, բոլորովին սխալ է և անհիմն, որովհետև մեզ և ոչ մի տեղ չ'պատահեցաւ «Խնձկոն գիւղ, կամ թաղ» կարգաւոր, այլ ամեն մի արձանագրութիւն մասնանիշ է լինում միաբանութեանը և մենաստաններին «Խնձկոնից ուխտս անուանելով»: Հասկանալի է նաև որ այս կողմերում վանքերը և գիւղերը խիտ և այգիները շատ լինելու առթիւ, սկզբում ջրի մեծ նեղութիւն կրելիս են եղել:

Երրորդ արձանագրութիւնը արևմտեան դռան ճակատին է:

«Ի ՆԾԻԷ Թաւահանութեան հայոց:

«Յանուն Աստուծոյ կամ եղև ինձ կազարմիղէ հայոց թագուհի դուստր Աստակայ և ամուսին Գաղկայ թողեալ եմ զՏեկուոսայ շարիտան վանս Գաղկայ Շահանշահի և արևշատութեան իմ որդւոյն և վերակացուք սորա Պաւղոսն թողութիւն ասն հանապաղ արդ սք սք իշխեսցե լուծանել ՚ի ս Երրորդութենէ և ես Աշոտ Թագաւոր հաստատեցի և թողեալ եմ զհարկն բնովին յաւիտեանից վանս իմ արևշատութեան և իմ ծնողաց և եղբայրց և զաւակաց իմոց որ աւերեալ էր ՚ի Թաւահանութեան հայոց ՆԱԳ արդ եթէ սք հակառակ կայ կամ հարկիս կամ շարխախս... ՅԹԸ իցն նորոված է, երեքեալ լնցի որպէս կայէն անիծեալ որպէս քանս բաժին նորա ընդ Յուրայի խաչահանուացն եղեցի վանս սք Սարգսի շինութեան և վանս մեր հոգւոյն ազատութեան ազատեցաք զհայր, զմայր և զորդիս արդ մեր մեղաց և մեր ազգի մեղացն տեր է, որ ընդդէմ գնայ ինձ և Ներսէս Եպիսկոպոսի և Տարսն Տեկուոսայ և Աշանայ Երեցիւ և Մարմանայ հազարապետի ուրանայ հուսոմոյ որ և հիմնարկեցաք տեղիս ՚ի ձեռս Յուհաննու հայոց կաթողիկոսութեան և Յուհաննու արշարունեաց յիւր բարեխաւսութիւն և բոլոր ազգիս և ամուսնոյ և որդեկացս և սիրելեաց և Սահակ կամարական շէնի այս սրբոյ Սարգսի զգրան կամարն: ամեն:»

1) Հ: Զալալեանի «Ճանապարհորդութեան» բ մասի օգնականութեամբ, ուր և դրուած կան Տեկուի Ս Երրորդութեան բոլոր արձանագրութիւնքը, ես կարողացայ կարգաւ և օրինակել այդպիսիք:



ԲԱԳԴԱԴ ԲԱԳԴԱԲ ԵՒ ՇԷՅՆ ՕՄԱՐԻ ԳԵՐԵԶՄԱՆԸ:
ВИДЪ ГОРОДА БАГДАДА И МОГИЛЫ ШЕЙХА ОМАРА.

ԳԱՄՈՒՐ-ՂԱՆԱՅ:

Տեկուու և Բեշքիլիսայի մէջտեղում գտան-
վում է մի լեռ, որի գագաթին մի ժամանակ
ամրանալիս և պատերազմելիս են եղել հայկական
զօրքերը... Բերդի անառիկութեան և ամրութեանը

համար հնումն յերկաթի Բերդ, իսկ այժմ յՎա-
մուր-Ղալայ՝ անունը կուտան: Այստեղ յիշատա-
կութեան արժանի ոչինչ չկայ...:

Վ. Յովհաննէսեանց:

(Ըարունակեցի):

ՍԱՐԳԻՍ ԱԻԵՏԻՍԵԱՆ ՏԻԳՐԱՆԵԱՆՑ



ՍԱՐԳԻՍ ԱԻԵՏԻՍԵԱՆ մեր ազգային գործիչ-
ների միջէն՝ դաստիարակութեան և գրա-
կանութեան ասպարիզել մէջ, անտարակոյս ոչ նուազ
անցի ունի բռնած
նաև Սարգիս Աւետի-
սեան Տիգրանեանց,
որի կենդանագիրը
այսօր ապագրում
ենք մեր հանդիսի
մէջ:

Սարգիս Աւետի-
սեան ծննդեամբ Վոր-
Վախիջլեանեցի էր.
զինի աւարտելոյ իւր
ուսումը Մոսկուայի
կայսերական Համալ-
սարանին մէջ՝ 1830
թուականին, նա ու-
սուցիչ նշանակուե-
ցաւ Վաղարիան Ղե-
մարանին մէջ՝ Հայ
մատենագրութեան,
Ռուսաց և Վախին լե-
զուների: Ըմբողջ եօ-
թըն տարի ուսուցչա-
կան պաշտօնը կա-
տարելէն յետոյ այդ
Ղեմարանի մէջ, նա
փոխադրեցաւ նախ ՚ի Ռոստով, ուր նահանգական
ուսումնարանի մէջ վարեց ընդհանուր Պատմու-
թեան ուսուցչի պաշտօնը, և ապա ՚ի Սիմֆերա-
պօլ, ուր, նոյն քաղաքի գիմնազեոնին մէջ՝ կար-
գեցաւ գլխաւոր ուսուցիչ Վաղղիարէն և Վախին
լեզուների: Թէոդոսիոյ Խալիպեան ուսումնարանի
սկզբնաւորութեանէն մինչև վերջ՝ նա եղաւ նորա
մէջ պաշտօնակատար և տեսուչ: 1845 թուականէն
մինչև 1853 թուականը՝ վարեց նա նաև Հայերէն
գրեանց գրաքննչի պաշտօնը Օտեսայի գրաքննա-
կան ժողովում:



ՍԱՐԳԻՍ ԱԻԵՏԻՍԵԱՆ ՏԻԳՐԱՆԵԱՆՑ
վ. խ. թ. 28 Մարտի 1875:
СЕРГѢЙ АВЕТИСОВИЧЪ ТИГРАНЯНЦЪ.
(Պատկերս նկարեցաւ և փորագրեցաւ յատուկ մեր հանդիսի համար)

Այսպիսի գովելի և գերազանց ծառայութեանց
համար նա վարձատրուած էր Սրբոյն Աննայի եր-
րորդ աստիճանի շքանշանաւ, ունէր „ЗНАКЪ ОТЛИЧІЯ“
անուանեալ նշանը,
ևս և արժանացած
էր կայսերական պար-
գելի, այն է՝ յակա-
նակուու մատանոյ:

Արդարև քաղցր
է ՚ի միա բերել այն
համազգի անձանց
անունները, որք աշ-
խատել են ազգիս
համար և բարձրա-
ցրել նորա անունը:
Քաղցր է մանաւանդ
թողուլ ապագայ սե-
րունդին այդպիսի
ազգային գործիչների
պատկերները: Պա-
րոս Հայաստանի՝
հանդէսներեանբազ-
ղաւոր է համարում,
որ կարողանում է
կատարել այդ սրբա-
զան պարտականու-
թիւնը: Եւ յերաւի
որքան սիրելի լինելու

էին մեզ ունել մեր հին և մեր նոր մատենագրաց
և երևելի անձանց պատկերները, եթէ մնացած լե-
նէին...:

Չենք յիշում այն ջերմ համակրութիւնը և
լիակատար սէրը, որ վայելած էր արժանայիշատակ
ուսումնական դաստիարակն ազգիս Սարգիս Աւե-
տիսեան, որպէս իւր համազգիներէն, նոյնպէս և
օտարներէն:

Վախճանեցաւ նա Եյսկ քաղաքում, Մարտի
28 ին 1875 թուականին, ՚ի հասակի վաթսուե-
ումէկ ամաց:

Տ Ա Ն Կ Ր Է Դ

ԼՈՐԴ ԲԻԿՕՆՍՖԻԼԴԻ ՎԷՊԸ:

ԳԼ. Ե.

ՏԵՆՈՒՂԻՆ՝ մարկիզ ՄՕնտէկիտ, արդէն 21 տարեկան էր դարձել: Աորա չափահասութեան նշանաւոր օրը պիտի տօնուէր իւր հօր-գուքսի կալուածում ամենայն աւանդական շքեղութեամբ, որ վայել էր նորա մեծահաջակ անուան: Բոլոր դրացի կոմսութիւններից հաւաքուել էին նորա բարեկամները. նորա հօր գիւղացիները և կալուածատէրերը նոյնպէս հրաւիրուած էին ինչդպիսի: Պաւառպետները ճառեր էին ասում, քահանաները քարոյզ էին կարգում, բոլորքեան ծաղկի փունջեր և զանազան ուրիշ ընծաներ էին մատուցանում նորան, ուտում, խմում և ուրախանում էին: Մի խօսքով ամեն բան գնում էր իւր կարգով այնպէս, ինչպէս պահանջում էր սովորութիւնը, և մի միայն լորդ Լսկըդէլը՝ Տանկրէդի մօտ ազգականը, որին յանձնուած էր հացկերոյթի խնամքը, մեղանշեց հին սովորութեան դէմ՝ յանձնելով խոհանոցի վերահասու-թիւնը Պրանսիացի մօսիւս Լէանդրին իւր օգնականների հետ: Մօսիւս Լէանդրը, որին լորդ Լսկըդէլը հասկացրել էր՝ թէ ինքը հրաւիրուած է ոչ թէ դուքսին և նորա հիւրերին բաւականութիւն ցոյց տալու, այլ նոցա ճաշակը կրթելու համար, մեծ փոփոխութիւններ արեց խոհանոցի կերակուրների մէջ և այդպիսով մի տեսակ յիզափոխու-թիւն գործեց արիստոկրատների ստանդարտներում:

Ինքը Տանկրէդը քաղաքակրթուած վայելչադէմ, բայց անհամարձակ, մինչև անգամ դանդաղ երիտասարդ էր: Լսկըմանալի չէ՝ նորա հայրը՝ դուքս Բելլամօնտ, որ ամուսնացած էր իւր ՄՕնտէկիտ անուն մօրեղբօր դստեր հետ, զանազան ընտանեկան հանգամանքներից ստիպուած, բոլորովին առանձնացած էր ապրում, մեծ մասամբ իւր կալուածներում: Երանց խնամատարութիւնը նորա գլխաւոր պարագամունքն էր դարձել: Աս ինքը, իբրև վերին աստիճանի ազնիւ և բարեխիղճ մարդ, լաւ էր հասկանում իւր պարտքը դէպի այն հազարաւոր անհասները, որոնք բնակվում էին նորա սեպհական հողերի ահագին տարածութեան վերայ, և սրբութեամբ կատարում էր այդ պարտքը: Հեռաւոր շրջակայքներում անգամ նորա անունը քաջ ծանօթ էր ամենին և յարգելի: Բայց ԼՕնդօնում և նորա վերին դասակարգի շրջաններում դուքսը և նորա ամուսինը յայտնի չէին: Այդ շրջաններում գիտէին՝ որ այս աշխարհում կայ մի մեծ Անգղիացի ՊէՆ, որի անունն է դուքս Բելլամօնտ, գիտէին՝ որ ԼՕնդօնում այդ անուամբ յայտնի է մի տուն, շրջապատած գեղեցիկ պարտիզով, գիտէին վերջապէս՝ որ այս ինչ գաւառում մի հինաւուրց ամրոց կայ, որ պատկանում է նոյն անձին և կարող է համարուել Անգղիայի պարծանքը: Բայց թէ՛ շքեղ պարահանդէսներում, թէ՛ արքունիքում՝ մեծամեծ տօների ժամանակ, երբէք ոչ ոք չէր հանդիպում Բելլամօնտին. մի խօսքով դուքսը և դքսուհին այս աշխարհի մեծերիցն էին, բայց նոյն աշխարհից հեռու էին պահում իւրեանց անձը:

Ղուքսը իւր ընտանեկան պարտքը կալուածատիրոջ պարտականութիւններից վեր էր դասում: Աս միայն մի որդի ունէր, Տանկրէդ անուամբ. նորա ծննդեան օրից սկսած ծնողների երջանկութիւնը և բարեկեցութիւնը անհնարին էր

առանց Տանկրէդի բաղդաւորութեան: Այն իսկ ծննդեան րոպէից մինչև իւր կատարեալ չափահասութիւնը ԼՕրդ ՄՕնտէկիտը անդադար շրջապատած էր այնպիսի հոգատարութեամբ, այնպիսի քաղցր անձնանուէր սիրով, որ շատ սակաւ է վիճակվում մահկանացուներին: Աս իւր սկզբնական ուսումը ստացել էր իւրեանց տանը. իրաւ է, մի օր տարել էին նորան Խօն *) և յանձնել էին մի խումբ հաւատարիմ ծառաների և մի դաստիարակի հսկողութեան, բայց կէս տարին տակաւին չ'ըլացած, հեռացրել էին նորան այն տեղից, որովհետև Խօնի սաներից մէկը որկորացաւ էր ստացել: Այնուհետև Տանկրէդը երբէք չէ երևել ոչ մի ուսումնարանում և միայն 18 տարեկան հասակում ուղարկեցին նորան Օկսֆորդի համալսարանը: Մայրը, որ ինքն էր եղել իւր որդու սանտուն, ամենայն օր նամակ էր գրում նորան, բայց որովհետև այդ էլ չէր բաւականացնում նորան, այդ պատճառաւ դուքսը համալսարանի մօտ մի տուն վարձեց և այնտեղ հաստատեցին նորա իւրեանց բնակութիւնը, որպէս զի յաճախակի տեսնուեն իւրեանց որդու հետ:

Տանկրէդը շատ սիրով էր ուսանում և շատ էր կարգում, բայց իւր 21 տարեկան հասակում ծանօթ չէր ոչ կեանքի և ոչ մարդերի հետ. նա միջին հասակով, գեղեցիկ կազմուածքով և բոլորովին ֆիզիկապէս զարգացած երիտասարդ էր: Աորա մոյգ շագանակագոյն քանդուրները սփռվում էին ճակատի վերայ, բայց չէին ծածկում բոլորովին. նորա դէմքը գունատ էր, բայց նորա թուխ աչքերի ազդու արտայայտութիւնը և թարմ շրթունքների կարմրութիւնը ապացուցանում էին, որ նորա երակների մէջ առատ արիւն է հոսում. նորա երեսի գծերը կանոնաւոր էին, գրեթէ նուրբ, մինչև անգամ չափազանց քնքոյշ կ'ընկնէին նոքա, եթէ աչքի չ'զարնէր նորա մտայոյղ մեծ ճակատը, որի վերայ կարծես դրոշմած լինէր երկաթէ վճռողականութիւն և հաստատ կամք:

Երբ Անգղիացի անուականը դառնում է չափահաս, նա պիտի մօնէ հասարակական գործունէութեան ասպարէզը, այդ նորա պարտականութիւնն է. ձեռքերը ծալած նստելը ամօթ է: Աս կարող է չ'երևել վերին դասակարգի հասարակութեան մէջ, բայց Անգղիայի ապագայ պէրը պարտական է սկսել իւր հասարակական գործունէութիւնը, իբրև անգամ ստորին ժողովի: Ղեկըք այնպէս բերեց, որ դուքսի ազդեցութեան ներքոյ գտնուած ընտրողական շրջաններից մէկի մէջ անգամութեան տեղ բացուեց և Տանկրէդի ծնողները չ'էին տարակուսում, որ Տանկրէդը կ'համաձայնի քուէարկութեան ենթարկուել, և յայտնի բան է կ'ընտրուի անգամ: Ղուքսը վճռեց խօսակցել այդ մասին իւր որդու հետ և Տանկրէդը միանգամայն զարմացրեց հօրը՝ հրաժարուելով քուէարկութենից, որովհետև անյարմար էր

*) Այսպէս է կոչվում Անգղիայի երևելի լեկեոններից մէկը որ գտանվում է ԼՕնտօնի շրջակայքում, նորանից մի ժամուայ հեռաւորութեամբ: Խօնը հիմնել է Հենրիկոս վեցերորդը միայն 25 սաների կրթութեան համար, մինչդեռ այժմ՝ նոցա թիւը հասնում է 800 ի: Ծանօթ. Թարգմանչի:

Համարում իւրեան պարլամենտական գործունէութեան համար: Հայրը ենթադրեց՝ թէ Տանկրէդը առ այժմ իւրեան անպատրաստ համարելով, կամենում է յետաձգել այդ գործը երեք տարուան մինչև հետևեալ ընտրողութիւնների ժամանակամիջոցը, ուստի նկատեց՝ թէ այդ տեսակ վարվելը անհաշիւ բան է, որովհետև շրջանները այժմ տրամադրուած են ընտրել նորան իւրեանց ներկայացուցիչը և նորա մերժումը կարող է անբաւականութիւն ծագեցնել նոցա մէջ, իսկ երեք տարի անցնելուց յետոյ դուքսի ընտրողական շրջանների վերայ ունեցած ազդեցութիւնը կարող է թուլանալ, և այն ժամանակ կ'հարկաւորի ձեռնամուխ լինել այնպիսի միջոցների, որոնց ձեռնմխն չէ համակրում:

— Աս կարծում եմ, խորհրդաւոր կերպով պատասխանեց Տանկրէդը, որ դորանում ոչինչ կարօտութիւն չի լինի. ճշմարիտը ասած, ես համոզուած եմ, որ երեք տարուց յետոյ էլ նոյնչափ սակաւ տրամադրուած կ'լինիմ պարլամենտ մտնելու, որչափ և այժմ:

Պուքսը առաւել ևս զարմացաւ: Վարելի է, դու կարծում ես որ դեռ չափահաս չես այդպիսի գործունէութեան համար, բայց չէ՞ որ Պոկսը քեզանից էլ երիտասարդ էր, քեզ քաջ յայտնի է նոյնպէս, որ Պիտտը և Ոորբերտ Պիլը շատ շուտ նախարար դարձան:

— Նոցա հաճոյ էր թուում պարլամենտի մէջ գործելը և ես հասկանում եմ, որ նոքա աշխատել են ինչպէս կարելի է շուտ սկսել իւրեանց գործունէութիւնը, իսկ ես, ընդհակառակն, բոլորովին չեմ համակրում այդ տեսակ գործունէութեան:

— Վիցուք, թէ այդպէս է, բայց մի՞թէ քեզ յայտնի չէ որ իմ մահից յետոյ դու, ժառանգական իրաւունքով, լորդերի ժողովում տեղ պիտի ստանաս. իսկ դորանից առաջ քեզ հարկաւոր է գործել ուրիշ ժողովներում:

— Բայց ի՞նչ կ'ասէք դուք, եթէ պարլամենտի րէֆորմների նախագիծը չ'ընդունուի, եթէ յանկարծ ազնուական տոհմերի բոլոր արտօնութիւնները ոչնչանան...

— Անբաւականութեան մի նշոյլ երևեց դուքսի երեսի վերայ և նա պատասխանեց խորհրդաւոր ձայնով. «մեզ վայել չէ՞ այդպիսի ենթադրութիւններ անել, Անգղիան մի մեծ պետութիւն է և միայն ազնուականների շնորհիւ հասել է նա իւր մեծութեան:

— Բայց մի՞թէ թագաւորները ձեռնհաս չեն եղել իւրեանց երկրի վեմնութեան. զորօրինակ, Աղիսարէթ թագուհին...

— Այո՛, թագաւորներն էլ օգնել են իւրեանց կողմից:

— Բայց նոցա դերը, ինչպէս այսօր տեսնում ենք, արդէն վերջացել է. մենք էլ նոյնպէս կ'կատարենք մեր դերը և մի օր կ'հեռանանք բեմից:

— Պու շատ ազատամիտ ես խօսում:

— Չեմ կարծում. գոնէ մինչև այժմ ես ոչ մի կարծիք չեմ յայտնել:

— Մերելիս, ես շատ կ'ցանկայի խմանալ քո կարծիքը կամ ցանկութիւնը:

— Եթէ կամենում էք, ասեմ. իմ ցանկութիւնս է կատարել իմ պարտքը:

— Ի հարկէ, դու տէրութեան սիւներից մէկն ես. հետևաբար քեզ վերայ սրբազան պարտք է դրած պաշտպանել տէրութիւնը:

— Այո՛ եթէ միայն մէկը կարողանար հասկացնել ինձ՝ թէ ի՞նչ բան է տէրութիւնը, պատասխանեց հառաչելով

լորդ Մ'օնտէկիտը: Ինձ այնպէս է թուում, որ ձեր սիւները թէև կանգուն են, բայց ոչինչ չեն պահում. կարելի է, տէրութեան սիւները ուղիղ են կանգնած, թերևս նոքա շատ գեղեցիկ են, բայց ցաւալին այն է, որ նոքա այլ ևս պատասպարան չեն, այլ աւերակներ են դարձել:

Արկար խօսակցութենից յետոյ հայրը, դառնալով իւր որդուն, ասաց. «դու սկսիր քո գործունէութիւնը փորձառու մարդերի հետ, նոքա կ'օգնեն քեզ պարզելու այդ միջին հարցերը»:

— Նոքա կ'օգնեն ինձ միայն սխալների մէջ վարժուելու. ես համոզուած եմ, որ նոցա շրջանը ընկնողը չէ՞ կարող ազատ մնալ անխոհեմ քայլեր անելուց, իսկ ես՝ մինչև այժմ ազատ մնալով, կամենում եմ այսուհետև ևս նոյն գրութիւնը պահպանել:

— Աս ոչինչ չանե՞լ, հարցրեց դուքսը:

— Բայց մի՞թէ միութեան մէջ աշխատելուց հրաժարուելը նշանակում է խոստովանել որ անընդունակ եմ գործելու:

— Լա՛ւ, իսկ քո մտադրութիւնը ի՞նչ է. ունի՞ս մի որ և իցէ նախագիծ:

— Ունիմ:

— Հա՛, գոնէ այդ մի միտմարութիւն է, ուրախութեամբ բացազանչեց դուքսը. ինչպէս էլ որ լինի քո նախագիծը, դու կարող ես յուսալ իմ օգնութեան: Աս գիտեմ, որ Բելլամոնտի որդու նպատակները չեն կարող անարժան լինել, անկասկած դոքա մեծ և վե՛մ պիտի լինեն:

Հայրը ցանկացաւ խմանալ իւր որդու նպատակները և միանգամայն ապշած մնաց, լսելով նորա խօսքերը: Տանկրէդը յայտնից՝ թէ մտադիր է երկար ժամանակով բաժանուել ծնողներից, ճանապարհորդել, այցելել Ասիան, Արևելքը և Արուսաղէմը: Աւրոպայի նոր քաղաքակրթութիւնը չէր բաւականացնում նորան. Տանկրէդին թուում էր (թէև նա համոզուած չէր դորանում) որ հին աշխարհի քաղաքակրթութեան մէջ թաղուած է այն գաղտնիքը, որը միայն կարող է փրկել Աւրոպան քայքայուելուց, ուստի նա վճռել էր գնալ Արևելք գիտութիւն, ոգևորութիւն և եռանդ ստանալու համար: Անգղիացուց պետական և հասարակական կեանքի կազմակերպութիւնը նա անպայման մերժում էր:

— Աս շատ եմ մտածել իմ պարտականութիւնների մասին, ասում էր Տանկրէդը, և համոզուել եմ, որ չեմ կարող յանձն առնել մեր հայրենիքի գործերի գրութեան պաշտպանութիւնը, քանի որ այդ գրութիւնը զուրկ է հիմնաւոր սկզբունքից, և ոչ մի բանում ես չ'կարողացայ գտնել այդ սկզբունքը. ո՛չ դաւանութեան, ո՛չ կառավարութեան, ո՛չ սովորութիւնների, ո՛չ հոգևոր, ո՛չ քաղաքական և հասարակական կեանքի մէջ կայ հաստատ համոզմունք և հաւատք: Բայց ո՞վ կարող է կատարել իւր պարտքը առանց համոզմունքի ու հաւատքի: Ո՛չ դաւանութեան և ոչ քաղաքականութեան մէջ կայ ճշմարտութիւն. հասարակութիւնը չ'գիտէ հաստատապէս՝ թէ ո՞ր բանը վախելու է և ո՞րը անվայել. շատերը դժուարանում են որոշել իրողութիւնը լոկ խօսքերից. եթէ այս աշխարհում լինի ևս իրողութիւն, Անգղիայի ո՞ր անկիւնում պիտի որոնենք մենք դորան: Վերջապէս խնդրեմ ասէ՛ք՝ մեր երկրի կառավարութեան իրաւունքը ո՞ւմ ձեռքն է, թագաւորի՞. եթէ այդպէս է, ապա ուրեմն ինչո՞ւ զրկուեցան նոքա իւրեանց առաջուայ արտօնութիւններից: Իսկ եթէ արիստո-

կրատներին է պատկանում այդ իրաւունքը, դորան հակառակ, դուք ինքներդ խոստովանեցիք, որ մենք գոյութիւն ունենք միայն այն պատճառաւ, որ ժողովուրդը համբերութեամբ տանում է մեր լուծը: Իսկ ժողովուրդը, կ'հարցանէք ինձ, բայց ձեզ քաջ յայտնի է, որ ժողովուրդը ինքը խոստովանում է իւր ոչնչութիւնը: Պարզամետը, որին պատկանում է այսօր իշխանութիւնը, տարեց տարի զբաղած է կարկատանքով և հասուկոր նորոգումներով: Իսկ ինչ որ վերաբերում է մեր բարոյականութեան... ասէ՛ք ինձ, ի՞նչ բան է այդ հասարակական բարեգործութիւնը, մեր անգղիական բարոյականութեան իդէալը, արդեօք դա մեծագոյն առաքինութիւնն է, թէ խաբեբայութիւն: Մեզանում դորանումն էլ մի ընդհանուր սկզբունք չ'կայ. մեր բարոյականութիւնը սիոսիսիւմ է սեղերի, քաղաքների, փողոցների համեմատ և մինչև անգամ համաձայն այն օրէնսգրութիւններին, որոնք գոյութիւն են ստացել զանազան ժամանակներում: Ինչ որ բարոյական է

համարվում Լ ընդունում, այն արդէն անբարոյական է Մ ընտէկիտում, ինչ որ յանցանք է համարվում ստորին դասակարգի համար, այն միայն սխալ է որ և է վերին դասակարգի վերաբերմամբ:

Լ սելով իւր որդու խօսքերը, դուքը տարակուսանքի մէջ է ընկնում: Տանկէդը մեծ աշխոյժով սկսում է ապացուցանել, որ հպարտ Անգղիայի քաղաքական կեանքի կազմակերպութեան մէջ ոչ ճշմարտութիւն և ոչ սկզբունք կայ. այն ժողովուրդը, որ զուրկ է դոցանից, ասում է նա, այլ ևս ազգութիւն չէ, այլ մի ամբօխ, որ կառավարվում է ժամանակաւոր կոպիտ իշխանութեամբ:

— Բայց, սիրելիս, դորա դէմ դու ի՞նչ կարող ես անել. մի՞թէ դու կարող ես այդ բոլորը կարգի ու կանոնի տակ ձգել:

— Լսո ուսուցիչ չեմ, մնայլ պատասխանում է Տանկէդը. ես միայն աղաչում եմ ձեզ որ չ'ստիպէք ինձ մասնակցել պարզամետի անդամների գործունէութեան:

(Հարո՛ւնախօսք):

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆ

„Моисей Хоренский и древний Эпопея Армянский. Исследование Н. Эмпына, написанное по случаю V Археологического Съезда въ Тифлисе“. Москва 1881.

այն է՝

„Մովսէս Խորենացի և հին Հայկական վէպն. քննութիւն Մ. Էմպն“:

Ելյապիսի վերնագրով հրատարակեց Պ. Մկրտիչ Լյմին մի նոր քննութիւն, որ իւր բովանդակութեամբ արժանի է առանձին ուշադրութեան և կարող է մեծ հարուած տալ մինչև ցայժմ Մովսիսի Խորենացոյ Պատմութեան վերայ մեր և օտար գրականութեանց մէջ տեղի ունեցած հայեցումաձքին՝ եթէ այժմ 'ի մէջ բերուած կարծիքն ընդունուի:

Յայտնի է, որ մինչև ցայժմ Մովսէս Խորենացոյ վկայութիւնն՝ թէ նա իւր պատմութեան առաջին զրբի նիւթը հանած է Մար Աբասի երկասիրութեան միջէն, համարվում էր իբր հաստատ փաստ և երկրայութեան ենթարկուած չէր: Պ. Լյմինի ներկայ քննութիւնը հերքում է այդ և կամի ապացուցանել՝ թէ Մար Աբաս անունով Ասորին երբէք եղած չէ և թէ նա Մովսիսի Խորենացոյ երևակայութեան ծնունդ է, ևս և թէ Մովսէս Խորենացոյ պատմութիւնն հիմնուած է ոչ այն նիւթերի վերայ՝ որք իբր թէ բերուած էին Նինուէի գրատունէն, այլ բուն ազգային վիպասանութեանց

վերայ, ազգային երգերի վերայ, որք հասել էին մինչև Խորենացոյ ժամանակը: Ահա նորա 'ի մէջ բերած փաստերից մինը. «Ասր արդեօք Աղարշակայ և կամ Մեծին Աղեքսանդրի ժամանակ Նինուէ քաղաքը», հարցանում է Պ. Լյմին, և պատասխանում է այսպէս. «Ես հարցմունքին պատմութիւնը տալիս է հերքողական պատասխան», գրում է նա: «Եւ յիրաւի, նա (Նինուէն) աւերուեցաւ 625 թուականին Աիակասրէն Ասուր-Լյղիլ-Ելանի թագաւորութեան ժամանակ: Իւր անկումից յետոյ Նինուէն կրկին չկանգնեցաւ և նորա գոյութիւնը շուտով մոռացուեցաւ, այնպէս որ երկու հարիւր տարուց յետոյ, կարելի չէր արդէն որոշակի ցուցանել տեղն, ուր նա գտնվում էր: Չնայելով նոյնպէս, որ դեռ 300 տարի Աղեքսանդրէն և 475 տարի Աղարշակէն առաջ՝ Ասորեստանը իջաւ պատմական բեմի վերայէն իւր մայրաքաղաքով, Մովսէս Խորենացին հաւատացնում է թէ Նինուէն շարունակում էր իւր գոյութիւնը 150 թուականին Քրիստոսից առաջ: Եթէ Աղեքսանդրի և Աղարշակի ժամանակներին Նինուէն չկար, ուրեմն՝ հասկանալի է՝ թէ Նինուէի գրատան վերայ ևս խօսք ու զրոյց կարող չէ լինել: Ահա այսպէս և Նինուէն և նորա գրատունը դառնում են երևակայութեան ծնունդ: Եյն ժամանակ և քաղաքական Մատանը, և նորա թարգմանութիւնը՝ Աղեքսանդրի հրամանաւ՝ 'ի Յունաց լեզու, և Մար Աբասի թարգմանութիւնը նոյն մատենի մի մասնի յԱսորոց

բարբառ որ բովանդակում է իւր մէջ Հայաստանի հնազոյն պատմութիւնը, և նոյն թարգմանութեան բերուիլը Ազգաբնակի մօտ, և նորա պահուիլն թագաւորական պալատի մէջ, որպէս անգին գանձ, և նորա միջէն հատուածի գրոշմումը արձանի վերայ, և վերջապէս՝ թղթակցութիւնը Հայոց արքայի Մեծին Արշակայ հիւսն—այս ամենայն դառնում են շարադրութիւն Մովսիսի Խորենացւոյ. այն ժամանակ և «ուսումնական» Ասորին Մար Աբաս երեւելու է մեր աջաց առաջը իբր անձն, որ երբէք եղած չէ, և միայն ստեղծուած Հայոց Պատմութեան հօր հանձարով»:

Թէ ի՞նչ է հարկադրել Մովսէս Խորենացւոյ այդպէս ընթանալ, այդ ևս բացատրվում է Պ. Լյմինի քննութեանը մէջ:

ման, կամենալով իւր գրուածին աւելի զօրութիւն սալ, շարադրել է իւր գրուածի Նինուէի գրատունէն հանուելու պատմութիւնը: Նոյնը ասում է այժմ Պ. Լյմին, միայն վերաբերմամբ առ Խորենացին:

ԱԶԳԱՅԻՆ ԱՍՏԱԳԻՐԲ

«Փորձ» ազգային և դրականական Միամենայ հանգէս. Մայիս և Յունիս, 1881:

Տփխիսում հրատարակուող «Փորձ» անուն ամսագիրն դադարեցաւ: Անտարակոյս արալի դիպուած է այս ազգային դրականութեան համար: Ո՛րքան և պակասութիւնք, որքան և անկատարելութիւնք ունենար այդ հանգէսը, դարձեալ ցաւարի է նորա դադարումը:



ԲԱՅՐԱՄԻ ՏՕՆԸ ԹՈՒՆՈՒՋ ԲԱՆԱԳՈՒՄ:
ПРАЗДНИКЪ БАЙРАМА ВЪ ГОРОДѢ ТУНИСѢ.

Մի առ մի և երկարօրէն ՚ի մէջ բերել Պ. Լյմինի և միւս փաստերը կարող չենք հանդիսիս էջերի սղութեան պատճառաւ. բայց կարծում ենք որ բերուած հատուածն բաւական է պարզ գաղափար տալու համար ընթերցողաց մեր ուսումնական հեղինակի նոր քննութեանը վերայ:

Բայց և աւերորդ չենք համարում մեր ընթերցողաց միան բերել, որ սորանից հինգ վեց տարի առաջ մեր միւս ուսումնական համագրին՝ Պ. Վեբովըէ Պատկանեան, իւր մի քննութեան մէջ, ասակոծական էր ցուցանում ոչ Մովսէս Խորենացին, այլ նոյն իսկ Մար Աբասը, ապացուցանելով, միևնոյն փաստերով, թէ նա կարող չէր հանել Հայոց պատմութիւնը Նինուէի դիւանէն, ըստ որում զա չկար նորա ժամանակ, և թէ Մար Աբաս՝ ըստ ժամանակի սովորութեան և պահանջ-

Այժմ հրատարակուած վերջին տետրի մէջ տպուած կան երկու յօդուածք, որք կարող չեն չգրաւել ամենեցունց ուշադրութիւնը: Առաջին յօդուածն է՝ Պ. Ա. Երիցեանի ընդ վերնագրովս՝ «Ս. Նազարեանցի դրականական գործունէութեան մասին», և երկրորդն՝ «Սատանայի պաշտօնական մեծ հանգէսը» վերնագրով Աոմս Լյամնուէի («Նալբանդեանցի») գործը:

Այդ երկու աշխատութիւնքը կարգալիս չգիտես ի՞նչ մտածես: Այդ երկու գործն կարծես թէ մէկ մէկու հերքման համար են տպուած: Ա՛յն, ինչ բանի վերայ ծիծաղում է Պ. Երիցեան, այն, ինչ բանի մէջ մեղաւոր է կացուցանում նա հանգուցեալ Նազարեանցին, կատարում է այժմ ինքն «Փորձի» խմբագիր-հրատարակիչը:

Պ. Երիցեան գրում է (Գլ. ԺԵ.).

«Նա (Նազարեանցը) դարձել էր Նալբանդեանցի ձեռքին մի խաղաղիք և ինքը համակրում էր վերջինիս հնարած խաղերին, որոնցից մի քանիսը յիշեմ այս տեղ: Յայտնի է, որ Նալբանդեանցը Ներսէս Աթողիկոսի անձնական թշնամին էր, որովհետև վեհափառի հրամանաւ իւր մի քանի տգեղ գործերի համար ոչ միայն արտաքսուած էր Անտիստորիայի գրագրութիւնից, այլ և պիտի մարմնաւոր դատի ենթարկուէր, եթէ վրայ չհասնէր Աթողիկոսի մահը: Ներսէսը արդէն չկար, բայց Նալբանդեանցի վրէժը եռ էր գալիս և ահա այդ բոլորը արտայայտելու համար ընտրուեցաւ «Հիւսիսափայլը» (Հիւս. 1858, Թ. 2): Նալբանդեանցը ատելութիւն ունէր պ. Խ. վաճառականի դէմ, և ահա այս պարունը դառնում էր Առնոն Լամանուէլի յիշատակարանների ծաղրելու և հայհոյելու նիւթը: Նոյնը հանգուցեալ Մսեր Մազիստրոսի վերաբերութեամբ *) , նոյնը պ. Ե. **) հարուստ ընտանիքի վերաբերութեամբ, և այլն: Եւ այս բոլորը դադարում էր Նալբանդեանցի հեռանալով: Ի՞նչ խորհուրդ կար այս ամէնի մէջ: Ի՞նչ լուսաւորող և դաստիարակիչ նշանակութիւն ունէին ազգի համար զանազան հմայութիւնները, սև հաւերը, ալքիմիայի փորձերը ոսկի գտնելու, սատանայքը, կախարհութիւնները, երազները, հաստագլխէնց Բաղդասարը, Բեգզադէքը կամ թէ մի մարդու կնկայ ձեռքով մի աղջկայ ճանապարհից շեղուելը, փեսայի դրամներ ուղելը և այլն և այլն: Գուցէ այս բոլորը պէտքական էին Նալբանդեանցի անձին համար, բայց խնդրեմ Նազարեանցին ներել չէր իւր պատասխանատուութեամբ հրատարակուած ամսագիրը այլոց կրքերին զո՞հ բերել և այն ևս հասկանալով:»

Եթէ այս այսպէս է, ապա ինչո՞ւ «Փորձի» պատուելի խմբագիր-հրատարակիչը տեղի է տալիս այժմ իւր ամսագրի էջերի մէջ նոյն Առնոն Լամանուէլի (Նալբանդեանցի) մինչև ցայժմ անտիպ մնացած «Սատանայի պաշտօնական մեծ հանդէսը» վերնագրով գործին, որ բնաւ չէ՞ զանազանվում այդ հեղինակի «Հիւսիսափայլը» մէջ ապագրուած և Պ. Արեղեանից յիշուած միւս յօդուածներից: «Հասկանալով» է անում նա այդ անտարակոյս որ «հասկանալով», զի այլակերպ մեկնել կարելի չէ և նորա, նոյն յօդուածի տակում, ապա՞ծ ծանօթութիւնը, որի մէջ յիշում է նա քանի մի անուններ, որք իբր թէ նկարագրվում են Նալբանդեանցի յօդուածի մէջ, և աւելորդ չէ՞ համարում յաւելացնել նաև թէ «երջանիկ է համարում իւր բան, որ յաջողուել է նորան կորուստից ազատել իւր ամենահամակրելի հեղինակի գրուածքը»:»

Այդ երկու յօդուածքը մեր միան բերեցին շատ բաներ, և զարթեցուցին մեր մէջ յիշատակութիւններ, յիշատակութիւններ որք երբէք մոռացուելու չեն... Յաւում ենք, որ այժմ ոչ տեղի և ոչ ժամանակի թոյլ են տալիս մեզ երկարօրէն նկարագրելու այդ

*) և **). Որովհետև սոքա մինչև վերջ հաւատարիմ մնացին Ներսէս Աթողիկոսին և շմանակեցեցան նորա դէմ՝ Մատթէոս արքեպիսկոպոսից, Նազարեանցից, Նալբանդեանցից, և այլ քանի մի անձինքներից կազմուած խմբին: Ծանօթ. Զ. Մ.

յիշատակութիւնները. բայց յուսով ենք որ մէկ օր կատարենք մեր այդ սրբազան պարտքը պատմութեան առաջ, և որ նորա, որք այժմ «երջանիկ» են համարում իւր բանց, հասկանան թէ մոլորուած և շատ անբաղդ անձինք են եղած... Բաւական է 'ի միտ բերել այդ վերոյիշեալ «ամենահամակրելի հեղինակի» գործունէութիւնը Ներսէս Աթողիկոսի կենաց վերջին ամիսների մէջ՝ երջանկայիշատակ Հայրապետի անունը և պատիւը կորսելու համար, նորա ուրախութիւնը և խնդրութիւնը Ներսէս Աթողիկոսի մահուան լուրը ստացուած ժամանակին, խնջոյքը՝ որ կատարեց Մատթէոս Ահհասպետան արքեպիսկոպոսը իւր արքանահանրի հետ (որոց պալատում էր Նալբանդեանց), նոյն երջանկայիշատակ Հայրապետի մահուան առթիւ... Ե՛յն մարդիկ, որք հակառակ էին Ներսէս Աթողիկոսին և որք թշնամաբար ընթացան նորա հետ՝ ո՞րքան կարող են համակրել լինել, կ'վճուէ պատմութիւնը...»

Զարմայր Մտերեանց:

ՕՐԱՑՈՑՔ

«Ամենօրեայ հասուածական Օրացոյց 1882 թուականին Քրիստոսի» ապագրութիւն Արգարու Գուլամիրեանց:

Այսպիսի վերնագրով պիտի հրատարակուի քանի մի շաբաթից յետոյ մի նորատեսակ Օրացոյց, որոյ նմանն մեր ազգի մէջ դեռ եղած չէ և որ առաջին փորձն է: Յոյս կայ, որ այդ առաջին փորձն յաջողի: Տպագրութիւնը գեղեցիկ և մաքուր է, բովանդակութիւնն ճիշտ. հասարակ օրերի թղթերն՝ ապուած են սև գունով, կիւրակիւնրի և ազգային տօների թղթերն՝ կապուտ, իսկ Ապստոլական տօների թղթերն՝ կարմիր գունով:

ՕՏԱՐԱԶԳԻ ԼՐԱԳԻՐՔ

«Journal d'Orient». Hebdomadaire. Vienne. 1881. №№ 30—34.

Այսպիսի վերնագրով՝ երկրորդ տարին է, որ հրատարակվում է Ալեքնայում գաղղեարէն լեզուով և խմբագրութեամբ պ. Ֆ. Մալէսի մի լրագիր, որ նուիրուած է արևելեան խնդիրներին, ընդ որս և Հայոց հարցին: Մենք ունիմք արդէն մեր առաջև այդ լրագրի վերջին համարներից մի քանիսը և ուրախ ենք, որ կարող ենք վկայել թէ այդ լրագիրն ըստ ամենայնի արժանի է ուշագրութեան իւր հմասուր և զգօն յօդուածների համար: Մեր Հայոց ազգն երջանիկ պիտի համարէ իւր բան, որ զանուցուտ Աւրոպայի մէջ լրագիր, որ նուիրում է իւր էջերը Հայաստանի ապագայ բարելուութեան հարցին: Ուրեմն և մեր պարտքն է պաշտպանել և օգնել նորան:

ՀԱՅԿԱԶՆԵԱՆ ՏԱՐԵԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՑԵՍՈՒԹԻՒՆ

Կ. Պոլս. 18 Օգոստոսի 1881:

ԵՐԵՎԱՆ այն ազգերուն, որոց քաղաքական վիճակին վերայ կարէ որ նորանոր տեսութիւններ անել, գոնէ երկու ամիսն մի անգամ:

Մեր այս համեստ ըղձանքն իսկ տակաւին չեմք կարող կատարել քանի որ եղելութեանց վերայ և եթ կարելի է մեզ խօսիլ, առանց հաւանականութեանց մէջ խտորելու կամ խափուպատիր յոյսերով տածելու զհասարակութիւնն:

» Համբերութիւնն տկարներու առաքինութիւնն է՝ կասեն: Արդի չորս տարիներու մէջ մեր ազգի վիճակն կարծեմք ամենէն թերահաւատներն կարողացան համոզել թէ յանջափս համբերատար է Հայ ժողովուրդն: Արծես նա աչքերն հորիզոնին վերայ սեւեռած կապատէ յուսալիր՝ որ խոստացեալ կենսատու արեգակն ծագէ և կը հրճուի հոգին երբ ցերեկն մի անգամ Պէոլին բառն հնչէ և գիշերն 61 կապալական թուանշանն երազէ:

Առ այժմ այսքան է միայն Ա Ն հատուկ մեր շահն:

Քաղաքական տեսակետով ինչ որ Հայն կարող էր անել՝ արաւ, որպէս զի իւր վիճակն բարւոքի: Հարկ էր նախ որ Հայն ազգաց ցանկին մէջ անցնել տայ իւր անունն: Այդ արձանագրութիւնն կատարեցաւ, թէպէտ փոքր ինչ դժուարութեամբ՝ բայց վերջապէս կատարեցաւ: Պէտք էր ապա համոզել զաշխարհս կառավարողներն թէ այդ ազգն թշուառ է, որքան կարելի է մի ազգի թշուառ լինիլ և ըստ ամենայնի արժանի է մի լաւագոյն կացութեան: Սա ևս յաջողեցանք կատարել, թէպէտ ուղեցին ոմանք վտասահացնել զաշխարհ՝ թէ երկրիս վերայ մի ժողովուրդ կայ միայն կատարելապէս գոհ և երջանիկ, և այն ևս Հայ ժողովուրդն է: Պետական անձինք համակրեցան մեր դատին, օրակարգին մէջ անցուցին զայն և ընդհանուր Արտակոյ մամուլն ինքնակամ ըստգրկեց Հայոց խնդիրն: Սպասեցինք վերջապէս երկար տարիներ, որ երկու փոքրիկ իշխանութիւններ ժամանակ ունենան ընդարձակելու իւրեանց սահմաններն, և սակայն ո՛չ միայն Հայաստանի բարենորոգմունք տակաւին իրականացած չեն, դեռ այդ շատ է և մեր այդքան պահանջող չեմք, այլ նոցա մասին հարկ եղած լուրջ բանակցութիւններն անգամ պաշտօնապէս սկսուած չեն:

Եթէ Ա Ն հատուկ աշխարհավարութեան մի ամենադժուար խնդիր կտակեց, տարակոյս չկայ, թէ նա ՚ի Հայաստանի գաւառս բարենորոգմունք մտածանելու խնդիրն է: Եւ այս դժուարութիւններն են անշուշտ զորս կանխապէս կ'զգան պաշտպան Տէրութիւններն և կը տարտամին այսչափ բանակցութիւններն սկսելու: Մի կողմ հող բարոյական ճնշմամբ առնուլ մի մարդու ձեռքէ և տալ միւսին, մի բերդի դրօշակի գոյնն փոխել, մի նաւահանգստի մենաշնորհութիւնն որ և է ազգի պարգևել, սորա այնպիսի գործառնութիւններ

են, որք կարելեաց կարգէն են և ստուգելն դիւրին, վասն զի նիւթական և շոշափելի են: Բայց Արմենիոյ պէս մի երկրի մէջ բարենորոգմունք կատարելապէս հաստատելու համար, հարկ է անպատճառ որ նախ՝ Թուրքիոյ կառավարութիւնն զգայ նոցա անհրաժեշտ պէտքն, և անկեղծօրէն, առանց մտաւոր թաքուն խորհուրդի յօժարակամութիւն ունենայ զայնս իրագործելու:

Արդ՝ այդ յօժարակամութիւնն չը լինելուն դէմ է ահա, որ Արտակոյ աշխարհավարութիւնն գիտէ կանխաւ թէ պիտի բախի անընդհատ և պիտի ստիպուի, ո՞ր գիտէ որքան ժամանակէ վերջն, կամ գոհանալ կէսկտուր անօրինութիւններէ և կամ զիմել այնպիսի համոզական միջոցներու, որոց մտաբերութիւնն անգամ կարող է քստմնեցնել ամենէն հաստատամիսն:

Թուրք կառավարութիւնն պաշտօնապէս չ'ուրանար բարենորոգմունք ամեն կողմ մտածանելու պէտքն, բայց զայնս անսահման յետաձգելու միտումն դժուար չէ նշմարել: Սա ՚ի սկզբանէ անտի համոզուած է կարծես՝ թէ անհնար է իրեն բարեկարգ և ազատ մի երկրի տէր լինիլ և պահել միանգամայն իւր դարաւոր ցեղային ազդեցութիւնն այլակրօն ազգաց վերայ: Այս մտածմունքով է ահա, որ ամեն ճիգ, ամեն հնարք պատրաստ է ՚ի գործ դնել՝ որ այս խնդրոյն լուծումն որքան կարելի է յետաձգէ, և այս անձնապահանջութեան բնազդումն է որ ոմանք աշխարհավարական ճարտիկութիւն կ'անուանեն: Արդ հարկ էր Թուրքաց զոհել ընդարձակ և բարեբեր երկիրներ, Իհարկէ այդ զոհողութիւնք յօժար կամք չէին կարող կատարիլ, բայց վերջապէս նոցա երկարատեւ ընդգիմութիւնն շահաւոր եղան իրենց, վասն զի յաջողեցան սեղմել փոքր ինչ Յունաց ու Վարասողոցոց պահանջներն: Այսպէս Հայոց խնդիրն ևս յետաձգելով, անակնկալ դէպքերու վերայ հաշուելով և անհամար դժուարութիւններ յարուցանելով նաև 61-րորդ յօդուածի անօրինութեանց դէմ, Թուրք կառավարութիւնն կը յուսայ անշուշտ՝ որ Տէրութիւնք կամ մի կողմ կը թողուն այս հարցն և կամ կարի իմն կը մեղմացնեն իւրեանց պահանջներն:

Հետևութիւն՝ Թուրքիոյ կառավարութիւնն երկրին բարենորոգմունքն զոհողութեանց կարգն դասած է:

Եթէ Թուրքիոյ կառավարութիւնն փոքր ինչ տրամադրութիւն ունենար բարեբերելու Հայաբնակ գաւառաց վիճակն՝ պէտք չէր որ 61-ր յօդուածին խմբագրութենէն ՚ի վեր, այսպէս անգործ մնար: Աս ո՛չ միայն այս նպատակաւ մի քայլ չառաւ, ո՛չ միայն դեռ պաշտօնապէս, գոնէ թղթի վերայ, այդ բարենորոգումներն չը վճռեց, այլ և կարծես գիտամար թող տուաւ որ Հայաբնակ գաւառաց ամենաթշուառ վիճակն առաւել ևս վատթարանայ, եթէ

կարելի է: Այսպէսով Հայոց գանգատներն բազմապատկեցան, վասն զի նիւթական կեղեքմանց վերայ յաւելցան նաև բարոյական ճնշումներ, որք եկին առաւել անտանելի անել նոցա վիճակն: Այս ճնշումներն, որոց յայտնի նպատակն է արգիլել Հայուն մտաւորական զարթումն, ՚ի վերջէ այս բնական հետեւութիւնն պիտի ունենան սակայն, որ հպատակ ազգաց առ կառավարութիւնն ունեցած համակրութիւնն պիտի թուլանայ, այն համակրութիւնն որու պէտք ունի նա իւր կարծածէն աւելի: Բնկերութիւններն, ժողովներն փակել, այլ և այլ պատճառանքներով հոգևոր առաջնորդներն գաւաւններէն հեռացնել, տպագրական ազատութիւնն սեղմել որչափ հնար է, արգիլել անգամ Հայ և Հայաստան բառերու արտասանութիւնն, սոքա այնպիսի փոքրոզի և ձախող ձեռնարկութիւններ են, որք քան զԹուրքն խելահինբրու ձեռքն անգամ յաջողութիւն չեն գտած:

Փոխանակ ուրեմն աշխատելու՝ որ Հայն իւր այժմեան դրութիւնն կշռելով և հետզհետէ դէպի լաւն ամենափոքր մի փոփոխութիւն նշմարելով իւր վիճակին մէջ, յարի և կպի թոյլբաց կառավարութեան և անտի սպասէ յապագային ամեն բարիք, գաւառական և նոյն իսկ կեդրոնական վարչութիւններն կը ջնան ևս քան զևս ստիպել զժողովուրդն, որ լքեալ և յուսահատ ուրիշ կողմ դարձնէ իւր աչերն, այն կողմն յորմէ գտած են իւրեանց փրկութիւնն ո՛չ սակաւ Հայուն վիճակակից ազգեր:

Եւ Հայուն այս ձգտումն, այս ամենաբնական իղձն իբր մի ոճիր կը նկատեն: Սը զարմանան՝ թէ ի՞նչպէս չեմք աղաղակել տանեաց վերայ թէ զմեզ կը ճնշեն, կը կեղեքեն, կ'ոչնչացնեն թէպէտ, բայց զմեզ կառավարողներն դարձեալ առատագութ, դարձեալ բարեխնամ և ամենողորմած են:

Թուրք լրագրութեան այս նկատմամբ ընծացքն նաև ո՛չ սակաւ դիտողութեան արժանի է: Ամեն զբ գիտէ թէ ի՞նչ է մի թուրք լրագիր գրողն: Տգէտ, լիբը և անվարկ արարածներ, որք միևնոյն ատեն գիտեն քծնիլ զօրաւորին առաջ մինչև ՚ի յետին ստորութիւն և խրոխտալ տկարին մինչև ՚ի ծաղրականն, որք ստութիւնն խմբագրական մի դրութեան վերածել են, որք ամենապարսաւելի իղձերն իբր ճշգրիտ իրողութիւնք կը յայտարարեն, ահա՛ այդպիսեաց ձեռքն է այսօրուան թուրք լրագրութիւնն, որ պաշտօն ունի հասարակաց կարծեաց ուղղութիւն տալու: Եւ այդ լրագիրներն, որք պետական անձանց ոմանց գործին կը համարուին, անցուսպ բերանով և ժահրալից մի գրչով ամեն օր կը յարձակին Հայոց անցեալին և ներկային վերայ, կ'արհամարհեն կ'անգօսնեն զաղղն և կ'սպառնան: Իսկ տպագրական օրէնքն, որ անողք է օտար լրագրաց ամենափոքր լեզուական մի շեղման, իւր լուութեամբն կը քաջալերէ այդ կրօնամոլներուն վայրենի ճիչերն, գուցէ այն յուսով, որ Հայք և Աւրոպական տէրութիւնք կասին թերևս նոցա սպառնալեաց առջև:

Եւ թող չը կարծեն թէ Հայուն գոյութիւնն իսկ ջնջելու սպառնալիքն մի պատահական բան է թուրք լրագրաց համար: Արք սոքա չը կարողացան Հայաստանն պաշտօնական կերպով ջնջել տալ աշխարհագրական քարտէսի վերայէն, երբ նորա ամենաթշուառ վիճակն ո՛չ ևս կարելի եղաւ յայտ յանդիման ուրանալ, երբ տեսին, որ հասաւ Հայկական խնդիրով զբաղելու ժամն, երբ համոզուեցան

վերջապէս՝ թէ Հայն միշտ մտադիր է աշխատելու՝ որ չը կողոպտուի, չը ճնշուի, չ'սպանուի, այն ատեն սպառնալիքն իբր մի դրութիւն ընդունեցան, որպէս զի Աւրոպան գործի ձեռնամուխ չեղած լաւ մտածէ և Հայն, վատագոյն մի վիճակէ երկնչելով, խեղդէ իւր ձայնն և այլ ևս չը պահանջէ մի բան:

Պէք գիտեմք, կ'ասեն, թէ երբ և ի՞նչպէս բարենորոգմունք պէտք են: Աթէ դուք գո՛հ չէք ձեր վիճակէն, մեք ձեր վերայ մտածելէ աւելի կարևոր մտառանջութիւններ ունիմք: Արդարութեան լաւ բան լինելն հոչակելու համար, մարդ պէտք է որ պարագոյ ժամանակ ունենայ: Իսկ եթէ մեր կամացն հակառակ պնդէք դարձեալ ամեն տեղ ձեր պահանջմանց վերայ, եթէ ստիպէք օտար տէրութիւններն միջամտել մեր մօտ ձեր տաղտկացուցիչ խնդրոց մասին, ճ, ան ժամանակ երկնչեցէք: Պուլկարաց գլխուն եկածն ձեր գլխին ևս պիտի գայ և այն ամենաառաքինի և բարեկիրթ ցեղն որ Վիւրդ կ'անուանի, Բօմբէն ո՛չ պակաս աններող է և չը պիտի հանդուրժէ որ իւր դրացի քրիստոնեան ազատ և երջանիկ լինի: Պաթաքի տեսարաններն եթէ Պուշե մէջ կրկնուին, ցաւալի մի բան կը լինի անշուշտ, բայց ի՞նչ կարող եմք անել: Յիրաւի Շէյխ Ուպետուլլահն կանչած եմք այս տեղ՝ որ այդ գիտաւորութեանն ետ կեցնեմք, բայց ի՞նչպէս հնար է որ մեք արգիլեմք այդպիսի մի եղելութիւն, երբ Վուրդին և Չէրքէսին արժանապատուութիւնն վերաւորել կը կամեք, դուք և ձեր պաշտպաններն՝:

Ահա՛ այս և սոցա նման փաստերով առաջն առնուլ կը կարծեն թուրք լրագիրք, Հայկական խնդրոյն մի օր պաշտօնապէս երևան գալուն և խուսափիլ կը ցանկան ամեն պատասխանատուութենէ երբ Վիւրդն և Չէրքեսն Ալպանիացոց դերն սկսին կատարել Ասիոյ մէջ: Սոքա են ահա՛ թուրք հասարակութեան կարծիք գոյացնողն երկրին կարևոր պէտքերու մասին, որ չը կորնչի նա, և կասկածել անգամ չեն երևիլ թէ ո՞րքան աղետաբեր է իւրեանց քարոզածն նոյն իսկ տիրող ցեղին շահերուն:

Բայց սոքա ամենն մեզ ի՞նչ փոյթ: Աթէ Հայն պիտի հասնի մի օր իւր ըզմանաց, եթէ պաշտպան տէրութիւնք, ինչպէս կը հոչակեն, հաստատապէս մտադիր են Հայոց կացութիւնն բարելաւել, ո՛չ դիւանական ճարպիկութիւնք կարեն արգելք լինել և ո՛չ թուրք լրագրագետ կոչուած մի քանի օղէմոլ և սրիկայ թիւրքերու վայրագ բացագանջութիւններն:

Պէք պէտք ունիմք առաւել քան զառաջինն պնդել, յարատեւել մեր իրաւունքն պահանջելու մասին: Տէրութիւնքն թէպէտ ծանր կը գործեն, բայց նոցա տրամադրութիւնն շահուած է մեզ արդէն: Իսկ Աւրոպական մամուլն պատրաստ է միշտ մեր գանգատանաց արձագանքն լինելու, պաշտպանելու մեր դատն, բայց պէտք է որ մեք ևս շարունակեմք մեր նիւթական և բարոյական ազակցութիւնն նուիրելու իրեն: Պեր մէջ խմբովին մի բան անել անհնարին է: Հարկ է ուրեմն որ ամեն երկրի Հայ իւր անձն պարտաւոր համարի իւր շրջանին մէջ խրախուսել օրագիրներն և տալ նոցա այն պիտանի տեղեկութիւններն, որոց պէտք ունին: Եւ անհատաբար մեր այս պարտքն կատարելէ ետև, կարող



ԱՆԱԶԱՐԲԱՅԻ ՄՕՏ, ՓՈՒՐ ԱՍԻԱՅՈՒՄ, ԳՏՆՈՒԱԾԻ ՀԻՆ ՀՈՒՎԻԱԿԱՆ ԶՐԱՆՑՔՆԵՐԻ ՄՆԱՅՈՐԴՔԸ:
 ОСТАТКИ ДРЕВНИХЪ РИМСКИХЪ ВОДОПРОВОДОВЪ, БЛИЗЪ АНАЗАРБА, ВЪ МАЛОЙ АЗИИ.

եմք նաև դեսպանաց ոմանց հանգիստ և անվտանգ մարտորդութիւն մաղթել, զի լաւ և դիւրամարս մի ընթրիքէ ետև, յայտարարեց Պ. Սոչէն, դեսպանք աւելի հեշտութեամբ համաձայնութիւն կը գոյացնեն միմեանց մէջ, քաղցեալ ժողովրդոց օգտին համար:

Այս օրերս ազգային մի վէրք ևս բացուեցաւ:

Աղիւկիոյ Տ. Մկրտիչ Աթոռակոն ստացաւ վերջապէս իւր հաստատութեան Պէրսիէն, բայց ոչ Վ. Պօլսոյ Պատրիարքի միջնորդութեամբ, ինչպէս սովորութիւն էր անել միշտ, իբր գաւառական մի առաջնորդ, այլ ուղղակի Ք. Պարանգի մեղով: Այս առ երևոյթս պարզ մի կղերութիւնն ծանր հետեւութիւններ պիտի ունենայ յապագային, զի այսպէսով Վ. Պօլսոյ Պատրիարքէն անկաս մի կրօնական իշխանութիւն ևս հաստատուեցաւ այս օրէն, որ բնականապէս արտօնութիւն պիտի ունենայ անմիջական յարաբերութիւններ հաստատել կառավարութեան հետ: Ասել է այսուհետև Պատրիարքն ոչ ևս անօրջ թուրքարնակ շայոց ներկայացուցիչն պիտի համարուի Ք. Պարանգի առաջ և չը պիտի կարողանայ յանուն ընդհանուր շայոց խօսել պաշտօնապէս ամեն տեղ: Ազգին այսպէս անջատուին քաղաքականապէս ծանր դժուարութիւններ պիտի երևան հանէ, նա մանաւանդ եթէ Մկրտիչ Աթոռակոն յաջողի, ինչպէս կը հաստատեն, Աղիւկիոյ յատուկ Պատրիարքութեան տիտղոսն ևս ստանալ:


Ք. Պարանգն, ինչպէս զիւրին է մակարերել, ամենայն փութով և գոհունակութեամբ շնորհեց այդ Պէրսիէն և հաւանական է որ նոյնքան եռանդով և ձգտութեամբ իբր Աղիւկիոյ շայոց Պատրիարք ևս ճանչնայ զայն: Սա մի բնական բան է կառավարութեան համար, որու շահն է որքան հնար է, այս միջոցին մանաւանդ, բաժանել շայ ժողովուրդն: Բայց այն որ բնական չերևի ամենուն, Մկրտիչ Աթոռակոնին այս հակազգային վարմունքն է, որ մի

քանի անձերէ վրէժ լուծելու համար, կամ համբերութիւնն սպառած, չը վարանիր այսպիսի բարոյական մի վնաս հասցունել թուրքարնակ շայոն ամբողջութեան: Մկրտիչ Պրբազանի այս վարմունքն պատարակած ժամանակինս—զի ինչ պատճառ որ յառաջ բերէ նա միշտ մեղապարտ է կառավարութիւնն մեզի դէմ այսպէս զինելուն համար,—պէտք չէ նաև մոռանամք որ ոչ սակաւ այսպանաց արժանի է Ազգային Երեսօխոխանական Ժողովն և ազգային վարչութիւնն:

Ահա մի անձ, որու վերայ 'ի սկզբանէ անտի ամեն որ կասկածելի աչք կընայէր, որ շնչին պատճառանքներով Պօլսիս կը գայ, ուր ինն ամիսէ 'ի վեր նստած ուղղակի կը բանակցի Տէրութեան պաշտօնէից հետ, որ բանաւոր մի պատճառ չէ կարող ցոյց տալ կրկին Սիս չը դառնալու համար, և վարչութիւնն, երեսօխոխանք, գիտնալով նորա նենգամտութիւնն, անփոյթ կը մնան և չունին բաւական նախատեսութիւն այդ անձն որ և իցէ կերպով, շոյելով անգամ, հետացնելու համար այս տեղէն:

Ազգային Ժողովն անգործութիւնն, անպետութիւնն պիտի ասէինք, շատերուն համար մի ապացուցեալ բան է կ'ասեն: Որչափ յարմար էր այս անփոյթ այդ կարծեաց անտեղութիւնն հաստատելու համար: Մէք կը կարծեմք սակայն որ ժամանակն զեռ ուշ չէ և Երեսէս Պատրիարքն կը յաջողի մի դարման տանիլ այս նորածին ձախող կացութեան, եթէ այս պարագայիս մէջ նաև ազգային պաշտօնական արարողութիւններու համար թանկագին մի ժամանակ չը կորուսանէ:

Իսկ եթէ վարչութիւնն, երեսօխոխանականութիւնն, անկարող լինին այս անպատէհութեան առաջն աննելու, չեմք կարծեր որ հասարակութիւնն անտարբեր մնայ բոլորովին և որեւիցէ կերպով զգացնել չը տայ Մկրտիչ Աթոռակոնին թէ յիշքան անընդունելի մի մարդ եղաւ իւր այս տգեղ վարմունքովն, յորմէ հետէ ազգային երեսօխոխանական ժողովն հետ հաշիւ տեսնելն դիւրին է:



ԱՍՏՂԿԻ ՆԱՄԱԿՆԵՐՆ 'Ի ՄՈՍԿՈՒԱՅԷ:

Մոսկուսի 12 Օգոստոսի 1881.

Անցեալ տարի Լոնդոնի Indian Institutionի մէջ կարդացուեցաւ շնորհաստանի մահմետական կանանց հասարակական գրութեան և կրթութեան վերայ մի գրուած, որ արժանի է ուշադրութեան: Այդ գրուածի հեղինակն, որ է Սէիդ շասան անուն մահմետականն, ասում է՝ թէ Անգղիայում շատ սխալ գաղափար ունեն շնորհաստանի կանանց հասարակական կենաց մասին, մանաւանդ այնտեղի «զէնան» կոչուած սովորութեան վերայ, որ պարտաւորում է փակուած պահել կանայքը: Այդ սովորութիւնը համարում է՝ նոյն կանանց կողմից՝ աւելի շուտ իբր առանձնաշնորհութիւն, քան սաստիկ դէպ 'ի նոցա միջոց: Մահմետական կանայքը այնպէս սովորել կամ ընտելացել են այդ սովորութեան, որ եթէ պատահելու լինէր նոցա հրաժարուիլ նորանից, նորա համարելու էին այդ գործը ամենամեծ անբարդութիւն իւրեանց կեանքի մէջ: Այո՛, այդ սովորութիւնը, հաւատացնում է Սէիդ շասանը, իբր թէ չունի նպատակ փակել կանայքը ընդդէմ նոցա կամքին. նա միայն բաւականացնում է նոցա սեպհական ցանկութիւնը հետևել սովորութեան, որ խոր արմատացած է արևելքում: Բայց

եթէ որ և իցէ պատճառներից ստիպուած, նոցա հայեացքն դորա վերայ փոխուի, այն ժամանակ Սէիդ շասանը չէ՛ երկմտում՝ որ այդ սովորութիւնը վերանայ: «Կարագրելով «Օքենանի» ծագումը, և յիշեցնելով՝ որ այդ սովորութիւնը կար նաև ամենազինների մէջ, հեղինակս խոստովանում է, որ շնորհաստանում կանայքը փակելու սովորութիւնը հասել է վերին աստիճան, քան միւս արևելեան երկիրներում, զոր օրինակ, Սիամում, Ասիայի մէջ, կամ Պարսկաստանի ժողովրդի մէջ, և մինչև անգամ Տաճկաստանում. ամեն տեղ մահմետական կանայքը ունին իրաւունք ազատ գուրս գալու և շրջելու: Բայց այդ սովորութիւնը, որ չունի հիմն ոչ կրօնի և ոչ բանականութեան մէջ, ակնյայտի ապրում կամ լաւ ևս ասել անցուցանում է շնորհաստանում իւր վերջին օրերը, ուր սկսել են արդէն լսուիլ ձայներ, որք պահանջում են, զիգիկնականութեան վերայ հիմնուելով, աւելի ազատութիւն կանանց համար: Մահմետականաց նոր սերունդը թոյլ է առողջութեամբ, և հնդկական մահմետականների օր ըստ օրէ պակասումը և սպառումը վերածում են այդ սովորութեան: Հայտնելով

յոյսը՝ թէ այն քանի մի մահամետականներն, որք բնակում են այժմ Անգղիայում, վերադառնալով Հնդկաստան, կընդունեն այսպիսի փոփոխութեան սկզբունքը, Սէիտ Հասան տալիս է հետաքրքրական տեղեկութիւնք մահամետական կանանց ընտանեկան կեանքի մասին: Աորա ունեն մեծ ներգործութիւն գերդաստանի միւս անդամների վերայ: Աորա սիրով աշխատում են ընտանեկան գործերի մէջ և նայում են խոհանոցի վերայ: Մ'նացեալ ժամանակը՝ անցնում են նորա ո՛չ միայն պարապելով ասղեգործութեան կամ կարի, այլ ևս գրքերի ընթերցանութեան, որ ունի առհասարակ կրօնական նշանակութիւն: Խաղալու սովորներն՝ նոյնպէս սիրելի խաղերից մին է նոցա մօտ. երբեմն խաղում են նորա փողով ևս, բայց ոչ մեծ գումարով: Թղթախաղութիւնն սակաւ է պատահում նոցա մօտ: Օրիորդաց կրթութիւնն սկսվում է մատաղ հասակից: Հարուստ գերդաստաններն ունին վարժապետուհիներ, որք պարտական են ունենալ անարատ անցեալ և դաւանել մի կրօն գերդաստանի հետ: Առհասարակ գիտութիւնն այդ վարժապետուհիների շատ լայն կամ ընդարձակ չէ: Բաց 'ի դասերից, որ տալիս են նորա գերդաստանի մատաղ օրիորդներին, նորա ուսուցանում են նաև աղքատ ծնողաց մանուկները, որք բնակում են մօտերքում: Սորանով լցվում է մասամբ պակասութիւնն նախակրթական դպրոցների ձրի ուսման: Հնդկաստանում ամենայն տեղ միակերպ չէ ուսումը, որ տալիս են մատաղ օրիորդաց: Բայց մեծի մասին ուսուցանում են նոցա միայն կարգալ և հասկանալ Վ. ուրանի քանի մի գլուխքը: Երբեմն կարդում են կրօնական գրքեր ևս: Օրիորդներից մի քանիսն սովորում են կարգալ ո՛չ միայն իւրեանց լեզուով, այլ նաև պարսկերէն և երբեմն արաբերէն: Արքիւն ժամանակներումն սկսան ուսուցանել նաև անգլիարէն լեզուն: Սէիտ Հասանի խօսքով մահամետական կանանց կրթութիւնն պարտական է կատարելագործուիլ և կրօնական կրթութեան հարկաւոր է յաւելացնել նոյնպէս

ամենահարկաւոր և բազմակողմանի գիտութիւնները: Հնդկաստանում մեծ կարօտութիւն կայ լաւ վարժապետուհիների և գեղեցիկ դասառական գրքերի: Հնդկաստանում պակասում են նաև բժիշկ կանայք. երկու ամերիկացի կին, որ բժշկութեամբ են պարապում Վալիկաթայի մէջ, մեծ փող են աշխատում:

Սարծում ենք՝ որ Հայաստանի խորքերում բնակած հայ կանանց գրութիւնն ևս Հնդկաստանի մահամետական կանանց գրութիւնից աւելի լաւ չէ: Բայց յոյս կայ, որ մէկ օր Հայաստանի կնոջ գրութիւնը ևս փոխուի, և այս մեր կարծեաց երաշխաւոր է Ս. Պօլսոյ Խասգիւղի Որբանոցը և նորա հիմնադիր-տեսչուհին՝ Արբուհի Մայրապետ Պալֆանն *), որք որպէս գրում են Մատի մէջ, «ո՛չ միայն աղքին՝ բարեկիրթ մայրեր պատրաստեցին, այլ և Հայաստանեայց քանի քանի վարժուհի Արբուհիներ ընծայեցին իւրեանց անյողոցող յարատուութեամբը, իւրեանց անխնայ աշխատութեամբը և իւրեանց զիւցազնական ճիգերովը», ևս և Տիկիսու «Մարիամեան-Յովնանեան» օրիորդաց դպրոցն, որ որպէս լսում ենք՝ գտանվում է յառաջադիմութեան ճանապարհի վերայ և խոստանում է մեր ազգին՝ բարի, գործունեայ և գիտուն հայուհիք **):

Սրկնում ենք մեր մէկ անգամ յայտնած կարծիքը՝ թէ մեր օրիորդներին պիտոյ է տալ այնպիսի ուսումն և գիտութիւն, որ նորա կարողանան լինել ճշմարիտ հայ-մայրեր, և ո՛չ, որպէս գրում է Արևանից Տիկին Արբուհի Խուրաբաշեանց (տես «Փարոսի» չորրորդ տետրը), «կապիկ Աւրուպացի կնոջ հագուստով և նիստուկացով»:

ԱՍՏՂԻԿ:

*) Սորա պատկերն տպագրուելոյս հանդիսիս նախընթաց տետրին մէջ: Հրատ:

**) «Փարոսի» խմբագրութիւնն սիրով տեղի կը տայ իւր կշերի մէջ այդ ուսումնարանի պատկերին, եթէ ուղարկուի նորան: Հրատ:

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍ

ԱՌԱՋԻՆ ԵԼԵԳՏԻԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ:

Ելեքորական զօրութեան գործածութիւնը այլ և այլ գործնական նպատակների համար առաւել և առաւել տարածվում է և համարեա ամենայն օր լավում է նորանոր գիտների վերայ գիտութեան այդ յոյժ հետաքրքրական մասնի մէջ: Այժմ ելեքորականութիւնը դառնում է իբր զօրութիւն մարդիկը և ծանրաշարժ իրերը մի տեղից միւս տեղ տեղափոխելու համար: Բէրլինի վերջին արուեստահանդիսում երևելի մեքենագործքն՝ Միւլենս և Պալպէ, ցոյց տուին իւրեանց պատրաստած փորձնական օրինակը (մոդել) առաջին ելեքորական երկաթուղոյ: «Այն մեքենագործքն շինեցին այժմ՝ իսկական ելեքորական երկաթուղու աւելի ընդարձակ տարածութեամբ և բաց թողին նորա վերայ, ներկայ ամի Մայիսի 12 ին, իւրեանց նոր ելեքորական կառքը: Այս է ահա այս նոր գիւտիս էութիւնը. երկաթուղոյ կայարանին մօտ դրուած կայ մի շոգեշարժ մեքենայ, նման այն մեքենաների, որք 'ի գործ են դրվում ելեքորական լոյսը հանելու համար. այս շոգեշարժ մեքենան միշտ անպակաս պահելով ելեքորական զօ-

րութեան հոսանքը, շարժում է ելեքորա-դինամիտական մեքենան, որ գտանվում է երկաթուղոյ կառքի մէջ, որ և շարժում է նորան: Ելեքորա-դինամիտական զօրութեան հոսանքը ներգործում է երկաթեայ թելի միջոցաւ նախ բէլերի վերայ, և ապա կառքի անիւններ վերայ, որի հետ և երկրորդ ելեքորական մեքենայն, որ գտանվում է կառքի տակում, օգնում է նոյնպէս շարժման՝ թեպէտ և սակաւ զօրութեամբ: Արքան հեշտ է շարժողութեան բերել կառքերը, այնքան ևս հեշտ է կանգնեցնել նոցա: Այս նոր ելեքորական երկաթուղոյ երկարութիւնը առ այժմ է միայն 3 քիլոմետր, այն է մօտ 3 վերստի. սկսվում է Բէրլինից ո՛չ հեռի Ալիստերֆէլտէ կոչուած երկաթուղոյ կայարանից և հասնում է մինչև Օլնուորական Ուսումնարանը, և այդքան տարածութիւնը անցնում է նա հինգ րոպէի մէջ: Այս երկաթուղոյ յատկութիւններից մինն այն է, որ շատ հեշտ և շատ աժան կարող է շինուիլ և չէ՛ ենթարկվում այն մեծամեծ դժուարութիւններին, որք անպակաս են այժմեան երկաթուղիների կառուցանելու ժամանակ:



„JOURNAL D'ORIENT“

(Orient-Zeitung)

HEBDOMADAIRE.

ՓԵՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ պատկերազարդ հանդիսի խմբագրութիւնն պարտք է համարում իւրեան ծանուցանել՝ թէ Վիեննայում արդէն երկրորդ տարին է, որ հրատարակվում է գաղղիարէն լեզուաւ շաբաթական „JOURNAL D'ORIENT“ վերնագրով քաղաքական հանդէսը, որի գլխաւոր նպատակն է մշակել արեւելեան խնդիրները, ընդ որս և Հայոցը: Այս պատուական և յոյժ օգտակար մեր ազգի համար հրատարակութեան Մեծապատիւ խմբագիր-հրատարակիչը (M-r F. Salles), իւր մեզ Օգոստոսի 18 էն գրած նամակում, խնդրում է բաժանորդներ գտնել նորա հանդիսի համար և ծանօթացնել մեր Հայերը նորա հրատարակութեան նպատակի հետ: Ուրախութեամբ կատարում ենք նորա ցանկութիւնը: „Journal d'Orient“ լրագրի տարեկան գինն է՝ 20 Ֆռանք (8 մանէթ), կէս տարուանը՝ 10 Ֆռանք (4 մանէթ), և երեք ամսուան՝ 5 Ֆռանք (2 մանէթ): Այդ հանդիսին ուղղակի դիմել ցանկացողներն իւրեանց նամակների հասցէն գրելու են այսպէս. „WIENNE (Autriche). M-r F. Salles, Rédacteur en chef du „Journal d'Orient“, 1., Rauchsteingasse, 10“.—

ԲԱՍՏԱՆԻՔԻ Ի ԳԵՂՂԻՄԻՆԻ ԼԵՅՈՒՆԻ ՀԱՅԵՐԻՆԻ յօրինեաց Նորայր Ն. Բիւզանդացի: Այս գեղեցիկ և յոյժ օգտակար երկասիրութեան տպագրութիւնը շարունակվում է և հասած է արդէն 64-րդ թերթին: Փառասէ խմբագրութիւնն բաց է անում ստորագրութիւն այդ բառգրքի համար և նորան ստանալ ցանկացողներն կարող են դիմել ուղղակի հրատարակչին: Ամբողջ երկասիրութեան բաժանորդութեան գինն է 1½ օսմաննան լիրա. իսկ թերթ թերթ գնել ցանկացողները վճարում են իւրաքանչիւր թերթի համար 60 փարա արծաթ: Մենք յոյս ունիմք, որ Ռուսաստանի մեր գիտուն Հայկազունք բաժանորդագրելով այդ բառգրքին ոչ սակաւ կօգնեն նորա փութապէս աւարտմանը: Նախապէս այդ աշխատութեան հետ ծանօթանալ ցանկացողքն կարող են տեսնել նորան մեր մօտ:

ՎԻՄԵՐԻՈՒԹԵԱՄԻ լոյս տեսաւ և վաճառվում է առայժմ Աղեքսանդրապօլում **ԿԵՐԱՊԵՏ ՅՈՎ ՀԱՆՔԱՆԵՆՆՅԻ** աշխատասիրած երկրորդ նկարը, որ պարունակում է ԽՆԾԿՕՒՆՅ մեհաստանների հետ ՀԻՐՍԿԻ մի քանի նշանաւոր ՀՆՈՒԹԵՆՅ տեսարանները, որոնք հրատարակուած չեն տակաւին ոչ լուսանկարով և ոչ ևս տպագրութեամբ: Գինն է 1 ռուբ. Ստանալ ցանկացողները պէտք է դիմեն հեղինակին հետևեալ հասցէով. „Во в. Александрополе. Каранеты Хачатуряны Агаджаманов.“

Հրատարակուեցաւ Ս. ՀԱՀԱՅՈՒՅԵՆԻ „ՀՐԵՊԵՐԵԿԵՆՕՍ ՉԱՅՆ“ վերնագրով՝ 8 ծալ, 351 երեսից բաղկացած և Ստեփաննոս Նազարեանցի պատկերով զարդարուած գեղեցիկ և արժանի յամենայն կողմանէ ուշադրութեան երկասիրութիւնը: Ստանալ կարելի է հեղինակի մօտ Մոսկուայում: Գինն է 2 ռուբլի: Օտարաքաղաքացիք իւրեանց նամակների հասցէն գրելու են այսպէս. „Москва, Армян. пер., во зданиу Лазарев. Института восточных языков, Сymbаты Семенову Шах-Азизу.“

ԳԵՄԵՐ-ՔԱԹՈՒՊԱՅԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՔԸ: Նոր տպագրութիւն. Մոսկվա. 1881. հեղինակի պատկերով. գինն է 50 կոպ. Հրատարակութիւն Թիֆլիսի Ընկ. Հայ. դրք. թ. 11.

ՎԵՆԵՐ ԻՕՍՆԱԿ Նիկողայոսի Տէր-Աւետիքեան. Երևն 1881. Գինն է 50 կոպ. Հրատարակութիւն Տ. Յ. Նազարեան (Հրատարակչի հասցէն՝ Во Шуш, Тифлису Назарян).

ՍՈՒՆԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ, Ազգային լիակատար երգարան. հրատարակութիւն Ն. Գրիգորեանցի. Եռաջին հատոր, երկրորդ տպագրութիւն, փոփոխած. Բազու, 1881. գինն է 1 ռուբլի (Հրատարակչի հասցէն. Авакы Лазаревуы Григориану, во Баку).

„МАЯКЪ АРМЕНИИ“ ИЛЛЮСТРИРОВАННЫЙ ЖУРНАЛЪ,

НА АРМЯНСКОМЪ ЯЗЫКЪ,

ИЗДАВАЕМЫЙ ВЪ МОСКВѢ

СОФІЕЮ МСЕРІАНЦЪ.

№ 5.

ГОДЪ ТРЕТІЙ.

1881 ГОДА.

ԲՈՎՆԵԳԵԿՈՒԹԻՒՆ

Ա. Եսայի Աբբեպիսկոպոս Կարապետան	էջ. 1
Բ. Վանի մի խօսք Յովհաննէս Այվազովսկու կենսագրութիւնից	2
Գ. Շիրակի մի քանի Հնու-Թիւնները (Շարունակութիւն)	—
Դ. Սարգիս Աւետիսեան Տիգրանեանց	9
Ե. Տանկերդ, Լորդ Բիկօնաֆիլդի վէպը. ԳԼ Ա	10
Զ. ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ	12
Է. ՀԱՅԿԱԶՆԵԱՆ ՏԱՐԵԳԻՐ	15
Ը. ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍ	19
Թ. ԸՅԼ ԵՒ ԱՅԼՔ	20
Ժ. ՋԱՆԱԶԱՆ ԳԻՏԵԼԻՔ (Հասկի 2 և 3 երեսներում):	

ՅԱՆԿ ՊԵՏԿԵՐԸՅ

- Ա. ԺԱՄԱՆԱԿԱՎԻՑ ՀԱՅԿԱԶՈՒՆՔ:—Ա. Եսայի Պատրիարք Երուսաղէմայ (էջ 1):—Բ. Սարգիս Ա. Տիգրանեանց (էջ 9):—
- Բ. ԱԶԳԱՅԻՆ ՀՆՈՒԹԻՒՆՔ:—Ա. Ագրակու Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքը (էջ 5):—
- Գ. ՏԵՍԱՐԱՆՔ ԱՇԽԱՐՀԻ:—Ա. Բաղդադ քաղաք և Շէյխ Օմարի գերեզմանը (էջ 8):—Բ. Բայրամի աօնը Թուրքիայ քաղաքում (էջ 13):—Գ. Անաղաղայի Հուլիանական ջրանցքների մնացորդը (էջ 17):—

ՀՍԿԱՅԱԿԱՆ ՁԵՌՔԵՐ, Անդրիական վէպ, պատկերազարդ, տղայոց ընթերցանութեան համար. Գինն է 10 կ. (սակսակս):
 ԵՂԲԱՅՐ ԵՒ ՔՈՅՐ, Գերմանական վէպ պատկերազարդ, փոքր տղայոց ընթերցանութեան համար. Գինն է 30 կոպ.
 ԱՐՔԱՅԱԿՈՒՍՏՐՎԱՐԴԵՆԻ, Գերմանական վէպ, պատկերազարդ, փոքր տղայոց ընթերցանութեան համար. Գինն է 35 կ.
 ՊԵՏՐՈՒԹԻՒՆ Կաթողիկոսաց Էջմիածնի ՚ի Սիմէօնէ մինչև ցՅովհաննէս Ը. ամբ Տեառն 1763—1831: Գրեալ ՚ի Մսերայ Մագիստրոսէ Մսերեանց Զմիւռնացոյ: Մոսկուա, 1876. 306 էրես. Գինն է 2 ռ.
 Վաճառվում են «Փարոսի» խմբագրատանում:

Փարոս Հայաստանի հանդէսը ստանալ ցանկացողքն իւրեանց նամակաց հասցէն գրելու են այսպէս. Вь Москву, Меньшикова башня, домъ Милованова, Ея Превосходительству Издательскому „Маяка Армении“ Софьи Мсерианцъ. Տարեկանի Հայք կարող են բաժանորդ գրուել դիմելով ՚ի Կ. Պոլիս առ Պ. Միրզա Մսերեան, Ամա ալթը Բաբազ խանի ձօռ, Թիւ. 26, կամ ՚ի Զմիւռնիա՝ առ Պ. Գրիգոր Մսերեան, ՚ի Սիւլիկ խան, վերի յարկ, Թիւ. 17, և կամ ուղղակի դիմել առ հրատարակիչն, իւրեանց նամակաց հասցէն գրելով այսպէս. à Son Excellence M-me Sophie Missérianitz, à Moscou, Menchikova bakhnia, maison Milovanoff.

Խմբագրի Պատասխանատու խաչարար խաչենեանց: Հրատարակիչ Սոֆիա Մսերեանց:

Հրատարակիչ Սոֆիա Մսերեանց